ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

# ԱՍՏՎԱԾ
# ԻՆՁ ՍԻՐՈՎ Է ՍՏԵՂԾԵԼ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

6 ՏԱՐԵԿԱՆ
II ՄԱՍ
19-36 դասեր

Երեւան-2009

ՀՏԴ 373. 167.1 : 23/28 (075)
ԳՄԴ 86.37 у 72
Ա 762

Ա 762 Աստված ինձ սիրով է ստեղծել: Դպրոցական վաղ տարիքի երեխաների քրիստոնեական ուսուցման ձեռնարկ (6 տարեկան), II մաս-Եր:
Աստղիկ - 2009թ.: 128 էջ:

ԳՄԴ 86.37 у 72

ISBN 978-9939-50-096-6

© World Vision Armenia, 2009
© WORDIRECT, 2009

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԹԱՐԳՄԱՆԻՉ ԵՎ ԽՄԲԱԳԻՐ՝

ՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ **WORLD VISION**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՎ **WORDIRECT** ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ՝ ՅՈՒԼՅԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԳԼՈՒԽ Զ ԻՄ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԸ ______ 7

Դաս 19. Նոոմին փափիկի պապմությունը ______ 9

Դաս 20. Հեսսեի որդի Դավիթը ______ 15

Դաս 21. Դավթի որդի Սողոմոն թագավորը ______ 21

Դաս 22. Մարիամն այցելում է իր զարմուհի Եղիսաբեթին ______ 27

ԳԼՈՒԽ Է ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՀՈԳԱՏԱՐ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՆԴԵՊ ______ 33

Դաս 23. Մարիամը փրկում է եղբորը ______ 35

Դաս 24. Ծնողները հոգ են տանում իրենց զավակների մասին ______ 41

Դաս 25. Մայրիկները երեխաներին բերում են Հիսուսի մոտ ______ 47

Դաս 26. Հովսեփն օգնում է իր ընտանիքին ______ 53

ԳԼՈՒԽ Ը ՀԱՇՏ ԼԻՆԵՆՔ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ______ 59

Դաս 27. Եղբայրները ներում են ______ 61

Դաս 28. Ավագ եղբոր նախանձը ______ 67

Դաս 29. Ասպծո ընտանիքն ընդգրկում է բոլորին ______ 73

Դաս 30. Լիդիան հյուրընկալում է Ասպծո ընտանիքին ______ 79

ԳԼՈՒԽ Թ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՇԱՏ ԼԱՎ ԲԱՆԵՐ ԵՆ ԱՆՈՒՄ ՄԻԱՍԻՆ 85

Դաս 31. Երկու որդիների առակը ________ 87

Դաս 32. Հիսուսը պաշտպանում է գնում ծնողների հետ ________ 93

Դաս 33. Հիսուսը մոր հետ գնում է հարսանիք ________ 99

Դաս 34. Մարթան և Մարիամը հյուրասիրում են Հիսուսին ________ 105

ԳԼՈՒԽ Ժ
ԱՍՏԾՈ ԸՆՏԱՆԻՔԸ ՏՈՆՈՒՄ Է ________ 111

Դաս 35. Հարության տոնը ________ 113

Դաս 36. Համբարձման տոնը ________ 119

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔՆԵՐ ________ 125

ԳԼՈՒԽ Զ

# ԻՄ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԸ

Հայրիկիցս,
մայրիկիցս, եղբայրներիցս ու
քույրերիցս բացի այլ հարազափներ ևս ունենք մեր
ընփանիքում: Պապիկս ու փափիկս, հորեղբայրներս ու
հորաքույրերս, քեռիներս ու մորաքույրերս և
զարմիկներս՝ ահա իմ մեծ ընփանիքը:



ԳԼՈՒԽ Զ

# Իմ մեծ ընտանիքը



## Ծնողների համար

Երեխայի կյանքում շատ կարևոր դեր է խաղում ընտանիքը, որը նպաստում է երեխայի ինքնության առողջ զարգացմանը: Այս գլուխն ուսումնասիրում է երեխայի մեծ ընտանիքը: Նոոմինի և Հռութի մասին պատմվածքը ներկայացնում է հարաբերությունը մեծ ծնողների՝ պապիկների և տատիկների և նրանց ծնողների հետ: Մեծ ծնողները կենտրոնական տեղ են գրավում Հեսսեի որդի Դավթի մասին պատմող դասում, իսկ Սողոմոն թագավորի մասին դասը հնարավորություն է տալիս կենտրոնանալ նրանց ընտանիքի ավելի մեծ անդամների իմաստության վրա, որոնցից երեխաները կարող են շատ բան սովորել: Ի վերջո, Մարիամի՝ իր զարմուհի Եղիսաբեթին այցելելու պատմությունն ընդգծում է զարմիկների հատուկ կապը:

ԴԱՍ 19

# ՆՈՈՄԻՆ ՏԱՏԻԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«ԾԵՐԵՐԻ ՊՍԱԿՆ ԻՐԵՆՑ ՈՐԴԻՆԵՐԻ ՈՐԴԻՆԵՐՆ ԵՆ ...»:
Առակներ 17.6

## Ճանաչենք

Հայրիկիս հայրիկը և մայրիկը իմ պապիկն ու տատիկն են: Մայրիկիս հայրիկն ու մայրիկը նույնպես իմ պապիկն ու տատիկն են:



պապիկ

տատիկ



Հորս հայրիկն իմ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ է: Նրա անունը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ է:

Հորս մայրիկն իմ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ է: Նրա անունը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ է:

Մորս հայրիկն իմ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ է: Նրա անունը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ է:

Մորս մայրիկն իմ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ է: Նրա անունը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ է:

Պապիկներն ու տատիկները սիրում են պատմվածքներ պատմել:

Ահա մի նկար այն պատմվածքի մասին, որը լսել եմ իմ _ _ _ _ _ _ _ _ _ :

*Մեր հաջորդ պատմվածքում գտի՛ր, թե ո՛ւմ տատիկն է Նոոմին:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՆՈՈՄԻՆ ՏԱՏԻԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Ըստ Հռութի գրքի

Հետևի՛ր պատմությանն ուսուցչի ընթերցելու ընթացքում: Ներքևի նկարներին հանդիպելիս ասա՛ պատկերված անձի անունը:

Հռութ 

 Նոոմին

Օրե՛ղ, բալի՛կս, արի քեզ համբուրեմ, - ասաց  , - դու այսօր վեց տարեկան դարձար:

- Տատի՛կ ջան, այսօր ինձ մի հեքիաթ կպատմե՞ս:



- Իհարկե, ի՛մ փոքրիկ: Ես քեզ կպատմեմ մի պատմություն, որը միշտ սիրում եմ պատմել: Այն պատմում է, թե ինչպե՞ս ծնողներդ իրար հետ ծանոթացան:

Օրեղը մոտ նստեց, որ լավ լսի իրեն հետաքրքրող պատմությունն ամբողջությամբ:

- Երկար տարիներ իմ ընտանիքը երջանիկ ապրում էր Բեթղեհեմում: Մի գարնան քիչ անձրև եկավ: Արտերը երաշտից չորացան, և ցորենը խանձվեց: Մեր ընտանիքը հեռացավ Իսրայելից ու գնաց ապրելու բարեկամ մովաբացիների հետ:

- Որքա՞ն ժամանակ, - հարցրեց Օրեղը:

- Լրիվ տասը տարի, - պատասխանեց  :

- Հետո ի՞նչ պատահեց, - հետաքրքրվեց Օրեղը:

- Ամուսինս և որդիներս մահացան: Ես որոշեցի վերադառնալ Բեթղեհեմ, որտեղ երաշտն անցել էր, - ասաց տատիկը: Տղայիս՝ Մաալոնի կինը մնաց մենակ: Նա մովաբացի էր՝  անունով: Մենք շատ էինք սիրում նրան: Հռութն ասաց. «Մայրի՛կ, ես ու դու երբեք չենք բաժանվի: Դու գիտես, որ սիրում եմ քեզ: Ուր դու



գնաս, ես էլ կգամ, քո Աստվածը կլինի իմ Աստվածը, քո ժողովուրդը կլինի իմ ժողովուրդը»:

Բեթղեհեմ հասանք գարու բերքահավաքի ժամանակ:

Ես մի հարուստ ազգական ունեի՝ Բոոս անունով: Նա սիրալիր էր Հռութի նկատմամբ: Նա թույլ տվեց, որ Հռութը հավաքի իր դաշտերի գարու թափված հասկերը: Մի օր ականջիս հասավ նրանց զրույցը:  ասաց.

- Ես օտար եմ այստեղ: Ինչո՞ւ ես այդքան բարի իմ հանդեպ:



- Այո՛, ես այդպիսին եմ, - ասաց Բոոսը, - քանի որ դու գրավեցիր իմ սիրտը քո ազնվությամբ ու բարեխիղճ աշխատանքով: Որքա՜ն ուրախ էր նա Բոոսի խոսքերից: Հռութի այտերը վարդագույն դարձան արևի շիկացնող ճառագայթի նման: Մի գեղեցիկ աշնանային երեկո  և Բոոսն ամուսնացան:

Բոոսը,  և ես երջանիկ ապրում էինք միասին: Աստված օրհնեց մեր աշխատանքը և ավելացրեց մեր ուրախությունը, երբ շուտով դու, Օբե՛դ, ծնվեցիր: Հարևաններս շնորհակալություն հայտնեցին Աստծուն՝ ինձ որդի, դուստր և այժմ քեզ՝ թոռնիկիս, պարգևելու համար:

*Գարու ընկած հասկերի մեջ գրի՛ր Նոոմինի թոռնիկի անունը: Գրի՛ր նրա անունը պատմության սկզբում:*



# ՏՈՀՄԱԾԱՌԻ ՎՐԱ ԳՏԻ՛Ր ՄԵԾ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Տարեսկզբին մենք սովորեցինք մեկ այլ զույգ ծնողների մասին: Դրանք Հովակիմը և Աննան են՝ Մարիամ Աստվածածնի ծնողները: Կարո՞ղ ես ասել, նրանք ո՞ւմ պապիկն ու տատիկն են: Ընտրի՛ր ծառի վրայի անուններից:
Ներկի՛ր թոռնիկի անվան շրջանակը դեղին,
իսկ մեծ ծնողների անունների շրջանակը՝ կանաչ գույնով:




Ամեն տարի Զատկի տոնին Հովակիմն ու Աննան հատուկ ճաշ էին ուտում, որ կոչվում էր Պասեք կամ Բաղարջակերաց: Այս ճաշի ընթացքում Հովակիմը Մարիամին՝ իրենց փոքրիկ դստերը, պատմում էր մի հետաքրքիր պատմություն: Նա պատմում էր, թե ինչպե՛ս Աստված փրկեց իրենց ժողովրդին՝ իսրայելացիներին, և նրանց առաջնորդեց դեպի իրենց սեփական երկիրը: Մարիամը հիշում էր Աստծո սիրո մասին վկայող այս պատմությունը և շատ ուրախ էր:

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Գրիգոր Հայրապետի պատմած պատմությունները

> **Հոգևոր Բառարան**
>
> **Սուրբ՝**
>
> այն անձը, ով սիրում է Աստծուն և սիրալիր վարվում մարդկանց հետ:

Զվարճալի է պատմություններ լսելը: Աստվածաշնչային մեր դասից իմացանք, թե Օբեդն ինչքա՜ն էր սիրում լսել իր Նոոմին տատիկի պատմած պատմությունները:

Նրա նման Գրիգոր Կաթողիկոսը սիրում էր պատմել այն մարդկանց մասին, ովքեր շատ էին սիրում Աստծուն: Նրանք իրենց սերն արտահայտում էին այնպես, ինչպես վերաբերվում էին մարդկանց: Եկեղեցին այդպիսի մարդկանց սուրբ է անվանում:

Գրիգոր Հայրապետը Հայաստանից ճանապարհ ընկավ դեպի հեռավոր սուրբ վայրեր: Նա զրուցում էր շատերի հետ և տեղեկանում սուրբերի մասին պատմություններին: Երբ նա տուն վերադարձավ, գրի առավ ամեն բան, որպեսզի նրանց պատմությունները կարդացվեն եկեղեցում:

*Ի՞նչ ես կարծում, Գրիգոր Կաթողիկոսին ի՞նչ էր ամենաշատը պետք ճամփորդության ընթացքում:*

*Նայի՛ր նկարներին և դրանք նկարագրող բառերին: Շրջագծի՛ր այն երկուսը, որոնց կարիքը նա հաստատ կունենար:*



անձրև



լսել



հիշել



դասարան

## Մենք հիշում ենք Սուրբերին

Երիտասարդ Մարիամը լսեց ասպվածային սիրո պատմությունները Բաղարջակերաց կոչվող ճաշին: Մենք փոնում ենք Հիսուսի հատուկ ընթրիքը Սուրբ Պատարագ մատուցելիս: Մենք նաև հիշում ենք սուրբերին, ովքեր ցույց տվեցին մեզ Աստծո սերը:

Սարկավագը կոչում է մեզ հիշել սուրբերին: Մենք խնդրում ենք, որ Աստված հիշի նրանց նույնպես և երգում ենք հետևյալը.

### *Հիշի՛ր, Տե՛ր, և ողորմի՛ր*




## Տանը՝ ընտանիքի հետ

Այսօրվա դասը չորս դասերից առաջինն է, որ կենտրոնանում է մեծ ընտանիքի կամ գերդաստանի պապիկների ու տատիկների, հորեղբայրների ու քեռիների, հորաքույրների ու մորաքույրների և զարմիկների վրա: Հռութի և Նոոմինի պատմության միջոցով ձեր երեխային առիթ տրվեց ուշադրություն դարձնելու պապիկ-տատիկների և թոռնիկների միջև առկա հատուկ հարաբերությանը: Մեր դասը ներկայացնում էր Նոոմին տատիկին, ով իր կյանքի պատմությունը վերհիշելով այն պատմում էր Օբեդին՝ իր թոռնիկին: Դա նրա ծնողների հանդիպման պատմությունն էր: Այս պատումով նա հետևում է հնագույն հասարակության մեջ ընդունված մի շատ կարևոր երևույթի՝ պատմության բերանացի ավանդմանը և նրա կարևորությանը ընտանեկան կապերի ամուր պահպանման համար:

Երեխաները ծանոթացան Հիսուսի մորական պապիկի ու տատիկի՝ Հովակիմի և Աննայի հետ, ովքեր խրայելական սովորության համաձայն պատմում էին Եղքի պատմությունը դսերը՝ Մարիամին, ամեն Զատկին, Պասեք ընթրիքի ժամանակ:

Պատմություններ պատմելը միաժամանակ կապված են սուրբերի՝ մեր սուրբ նախնիների կյանքի պատմությունների հետ և նրանց հիշատակությանը Սուրբ Պատարագի ժամանակ:

Ահա որոշ ցուցումներ, որ կարող եք միասին անել՝ ձեր երեխային օգնելով երախտապագետ լինել պապիկների ու տատիկների նկատմամբ և սովորել հիշելու Եկեղեցու սուրբերին, ովքեր հոգևոր առումով ներշնչում են մեզ:

1. **Պատմության ժամ:** Ընտանիքով հիշատակության երեկո անցկացրե՛ք: Թող ձեզանից յուրաքանչյուրը պատմի մի հուշ պապիկի կամ տատիկի մասին: Երեխաները գուցե ցանկանան նայել ընտանեկան լուսանկարները կամ նկարել պապիկի կամ տատիկի հետ կապված մի հիշողություն:
2. **Կազմե՛ք տոհմածառ:** Գրե՛ք ընտանիքի մեծ ծնողների, ձեր և ձեր զավակների անունները թղթի փոքր կտորների վրա և դրանք կախե՛ք տանը ավազի կամ հողի մեջ աճեցված փոքր ծառի կամ բույսի ճյուղերին:
3. **Հոգևոր երգեցողություն:** Երգե՛ք «Յիշեա Տէր և ողորմեա», որը Սուրբ Պատարագի ժամանակ երգվող պատասխանն է սարկավագի կողմից ընթերցվող սուրբերի հիշատակությունների:
4. Երեխային պատմե՛ք ձեր կողմից սիրված որևէ սուրբի կամ ձեր երեխայի պահապան սուրբի պատմությունը:

# ՀԵՍՍԵԻ ՈՐԴԻ ԴԱՎԻԹԸ

**«ՏԻՐՈՋ ՀՈԳԻՆ ԴԱՎԹԻ ՎՐԱ ԷՐ»:**

**Ըստ Ա Թագ. 18.13**

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



Հայրս շատ ուրախ էր՝ լավ տրամադրությամբ: Նա ասաց, որ արագ պատրաստվենք:

- Մենք պիտի այցելենք ձեր պապիկին ու տատիկին:

Կրտսեր քույրս, որ հազիվ չորս տարեկան էր, ասաց.

- Հայրի՛կ, իսկ դու պապիկ ու տատիկ ունե՞ս:

- Իհարկե, անուշի՛կս, նրանք հորս հայրիկն ու մայրիկն են, - ասաց հայրը:

- Հայրի՛կ, նրանք է՞լ մեր պապիկն ու տատիկն են:

- Նարե՛ ջան, նրանք քո մեծ պապիկն ու տատիկն են: Դե արա՛գ, գնացինք, նրանք անհամբեր ձեզ են սպասում:

*Գրի՛ր քո իմացած անունները: Երբ դժվարանաս, դիմի՛ր ծնողներիդ օգնությանը:*




*Աստվածաշնչային պատմության մեջ գտի՛ր Դավթի հոր պապիկի ու տատիկի անունները:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ
# Դավիթը՝ Հեսսեի որդին
### Ա Թագավորություններ 16


Դավիթ


Սամվել


Բոոս


Հեսսե

 իր ութ որդիներին պատմեց իրենց Օբեդ պապիկի և իրենց մեծ պապիկի ու փափիկի՝  և Հռութի մասին: , որ ամենափոքրն էր, օգնում էր իր հորը և արածեցնում իրենց գառների հոտը Բեթղեհեմի սարերում: Ոչ մի գայլ չէր համարձակվում փանել նրա գառներին: Երբ գայլը մոտենում էր հոտին, նա իր պարսատիկով հարվածում էր նրան:

 նաև լավ սրինգ էր նվագում: Գառները ճանաչում էին  սրինգի ձայնը: Երբ նվագում էր, գառներն իրենց ապահով էին զգում, քանի որ գիտեին, որ նա իրենց կողքին է: Մի օր Տիրոջ քահանա  այցի եկավ նրա հորը՝ : Աստված ասաց .



- Եղջյուրիդ լի յո՛ղ լցրու և այժմ գնա՛ Բեթղեհեմ ու գտի՛ր իմ ընտրած փղային, որը մի օր թագավոր պիտի դառնա իմ ժողովրդի համար: Ես ցույց կտամ, թե ո՛ր մեկն է նա:

Հեսսեի որդիներից մի քանիսի հետ հանդիպելուց հետո  հարցրեց.



- Էլ ուրիշ որդի չունե՞ս:

- Ունեմ, - պատասխանեց , - փոքրիկ տղաս՝ Դավիթը, ոչխար է արածեցնում:

 ասաց.

- Մա՛րդ ուղարկիր և բերե՛լ փուր նրան:

 գտան սրինգ նվագելիս և կանչեցին.

- , , հայրդ ուզում է, որ հիմա տուն գաս: Երբ  տուն եկավ, Աստված ասաց .

- Սա՛ է իմ ընտրյալը: Վե՛ր կաց և սուրբ յուղով օծի՛ր նրան: Նա մի օր թագավոր պիտի դառնա:

 կատարեց այն, ինչ Աստված պատվիրեց: Այդ օրվանից Տիրոջ հոգին իջավ Դավթի վրա: Երբ  ծոռը՝ , մեծացավ և դարձավ Իսրայելի թագավոր, լավ ծառայում էր Տիրոջը:

*Դավիթը շնորհալի տղա էր: Ներկի՛ր այն բաները, որ նա կարողանում էր անել:*

  

  

*Այսպիսի √ նշան դի՛ր Դավթի մեծ պապի անվան կողքին:*

Դավիթ → Հեսսե → Օբեդ → Բոոս

**Հոգևոր Բառարան**

**ԲՈՈՍ՝**

Դավթի մեծ պապը:

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Դավթի հոգևոր երգերը

Դավիթը շատ էր սիրում Տիրոջը: Նա գեղեցիկ հոգևոր երգեր նվագելով գովում էր Աստծուն: Նա շատ աղոթքի երգեր է գրել՝ Աստծուն շնորհակալություն հայտնելու և Նրա օգնությունը խնդրելու համար: Եկեղեցում մենք երգում ենք նրա հոգևոր երգերը: Կա մի հատուկ բառ, որով կոչվում են Դավիթ արքայի հոգևոր երգերը:

*Լրացրո՛ւ խաչբառը, որ գտնես այդ բառը:*

1 2 3 4 5 6

1  վերջին տառը **Պետրոս** բառի:

2  չորրորդ տառը **դասասեղան** բառի:

3  երկրորդ տառը **աղավնի** բառի:

4  երրորդ տառը **լիմոն** բառի:

5  նախավերջին տառը **խնձոր** բառի:

6  երկրորդ տառը **Աստվածածին** բառի:

# ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԱՍՏԾՈ ՕԳՆԱԿԱՆ




Սուրբ Ներսես Մեծը Սուրբ Գրիգոր Լուսավորչի ծոռն էր: Դավթի նման նա շատ լավ էր հոգ տանում իր ժողովրդի մասին: Ներսես Հայրապետը հետևում էր, որ յուրաքանչյուր մանուկ խնամված լիներ:

Նա օգնում էր, որ ծնողները երեխաներին  ուղարկեն:

Նա  էր տալիս քաղցածներին:

Նա  է կառուցել հիվանդների համար:

Նա  է կառուցել ճամփորդների համար:

Նա Աստծո  է ցուցաբերել՝ հոգալով իր ժողովրդի կարիքները:

*Նկարի՛ր մի պատկեր՝ ցույց տալու, թե դու ի՞նչ կանեիր ի սեր Աստծո:*

# Գովաբանական սաղմոս

## Սաղմոս 46.2

*Ուսուցչի օգնությամբ կարդա՛ սաղմոսի տողը: Օգտագործի՛ր նկարները՝ բաց թողնված բառերը գտնելու համար:*



**մարդիկ**



**ծափ**



**աղաղակով**

**Բոլոր**   **զարկեք**

**ցնծության**  **դիմեցե՛ք Աստծուն:**

## Տանը՝ ընտանիքի հետ

Այսօրվա դասը ներկայացնում է չորսից երկրորդ դասը, որի առանցքը գերդաստանն է՝ իր բոլոր անդամներով: Աստվածաշնչային պատմությունը ներկայացնում է Դավիթ թագավորին՝ Հեսսեի որդուն և Բոոսի ծոռին, որոնց մասին անցանք նախորդ դասին: 6-ամյա երեխաները տակավին չունեն պատմական ժամանակագրությունն ընկալելու կարողություն, որի պատճառով գուցե դյուրին չհասկանան ապուպապերի գաղափարը: Մինչդեռ նրանք ճանաչում են իրենց պապիկներին ու տատիկներին, որով դասը պատկերավոր  բացատրեց, որ նրանց ծնողների պապիկն ու տատիկը հենց իրենց մեծ պապիկն ու տատիկն են: Դասը նաև շեշտում է, որ գերդաստանն ունենում է շատ անդամներ:

Սույն դասում աշակերտներին ներկայացվեց Դավիթը՝ որպես հրաշալի թագավոր, որին Աստված ընտրեց իր ժողովրդի համար: Դավիթն օգտագործեց երաժշտի ու հովվի իր կարողությունները՝ սիրելու և խնամելու իր ժողովրդին, ինչպես նաև գովելով արտահայտելու իր սերը Աստծո հանդեպ: Նրանք ծանոթացան նաև Սբ. Ներսես Մեծ կաթողիկոսին՝ որպես իր ժողովրդի կարիքները հոգացող մեկ այլ առաջնորդի:

Քանի դեռ վեցամյա երեխաները ընտանեկան հարաբերությունները ճանաչելու անման շրջանում են, Դավիթ արքայի պատմությունը լավագույնս հնարավորություն է տալիս նրանց ուշադրությանը ներկայացնելու նրա տոհմագիծը՝ սկսած Բոոսից և Հռութից և նրանց որդի Օբեդից մինչև վերջինիս որդի Հեսսեն, որը դարձավ Դավիթ թագավորի հայրը: Պատմությունը նաև հող է նախապատրաստում ճանաչելու Հիսուսի նախահայրերին՝ ըստ մարդկային սերնդաբանության:

Ընտանեկան պատմություններին ծանոթանալը հաստատում և ամրապնդում է երեխաների սեփական ինքնությունը: Ձեր զավակի հետ կատարե՛ք հետևյալ մի քանի առաջարկությունները.

1. Ճանաչե՛լ տվեք իրենց ապուպարերին կա՛մ պահպանված նկարների, կա՛մ եթե նրանք ողջ են, նրանց այցելելով:
2. Աղոթե՛ք Սաղմոս 46.2 միասին: Թող ձեր մանուկը ծափ տա և ցնծության աղաղակ հնչեցնի տողի համապատասխան հատվածում:
3. Թող ձեր փոքրիկը պատկերի մի նկար՝ ցույց տալով, թե Սբ. Ներսեսն ի՞նչ արեց իր ժողովրդի կարիքները հոգալու համար:

ԴԱՍ 21

# ԴԱՎԹԻ ՈՐԴԻ ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՎՈՐԸ

**«ԼՍԻ՛Ր ՀՈՐԴ ԽՐԱՏԸ, ՈՐՊԵՍԶԻ ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՌՆԱՍ»:**

**Առակներ 19.20**

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Հիմա դու արդեն վեց տարեկան ես, ուստի կարող ես ինքնուրույն շատ բան անել: Գրի՛ր կամ նկարի՛ր՝ ինչ ինքնուրույն կարող ես:

Երբեմն զուցե օգնության կարիք զգաս մի նոր բան անելու համար: Կամ միգուցե պետք ունենաս մեկին հարց տալու, որպեսզի գտնես պատասխանը: Ո՞ւմ կդիմեիր օգնության համար:

*Գծով նախադասությունը միացրո՛ւ քո ընտրած նկարին:*





*** սովորել հեծանիվ քշել ***

*** որոշել բարի բան անել ***

*** օգնել թվաբանության մեջ ***

*** սովորել Սուրբ Ծննդյան շարական***

*** սովորել լավ պահվածք ***




*Սողոմոնն արքան ո՞ւմ դիմեց օգնության համար: Այն պարզի՛ր Աստվածաշնչի պատմության մեջ:*

## ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ
# Սողոմոն թագավորի իմաստուն որոշումը

### Գ Թագավորություններ 3.3-28



Դավիթ թագավորն իր որդուն՝ Սողոմոնին, ընտրեց որպես իր հաջորդ: Սողոմոնը շատ էր սիրում Աստծուն:

Մի օր Աստված խոսեց նրա հետ երազում:

- Ի՞նչ որ ուզես, կտամ քեզ, - ասաց Տերը:

Սողոմոնը լավ մտածեց ու ասաց.

- Տե՛ր, քո շնորհիվ ես թագավոր դարձա: Բայց ես երիտասարդ եմ և Քո օգնության կարիքն ունեմ: Խնդրում եմ ինձ իմաստությո՛ւն տուր, որպեսզի գիտենամ ճիշտն ու սխալը:

Աստված գոհ մնաց Սողոմոնի խնդրանքից և ասաց.

- Ես քեզ մեծ իմաստություն կտամ:

Երբ Սողոմոնն արթնացավ երազից, փառք տվեց Աստծուն:

Մի օր երկու կին եկան Սողոմոն արքայի մոտ և ներկայացրին իրենց վեճը: Կանանցից մեկն ասաց. «Ձե՛րդ մեծություն, այս կինը և ես ապրում ենք միևնույն հարկի տակ: Մի գիշեր նրա նորածին տղան մահացավ, և նա գողացավ իմ տղային»:

Մյուս կինն առարկեց. «Ո՛չ, Ձերդ մեծություն, ապրող տղան իմն է, մահացածն է նրանը»: Եվ այսպես նրանք շարունակում էին վիճել թագավորի առջև:

Սողոմոնը մտածեց ու ասաց. «Ինձ մի սո՛ւր բերեք»: Երբ ծառան սուրը բերեց, Սողոմոնը հրամայեց նրան. «Մեջտեղից կիսի՛ր երեխային, մի կեսը տո՛ւր մայրերից մեկին, մյուս կեսն էլ՝ մյուսին:

Առաջին կինը, որի որդին ողջ էր, ասաց. «Ո՛չ, Ձերդ մեծություն, երեխային մի՛ սպանեք, այլ տվե՛ք մյուս կնոջը»: Իսկ մյուս կինն ասում էր. «Նրան մեջտեղից կիսե՛ք»: Սողոմոնն ասաց. «Երեխային չսպանե՛ք, այլ տվե՛ք առաջին կնոջը, նա է մայրը»: Պալատում բոլորը

զարմացած մնացին Սողոմոնի իմաստուն որոշման վրա՝ իրական մորը գտնելու համար: Շուտով լուրը տարածվեց ամբողջ Իսրայելում, և բոլորն իմացան, թե որքան իմաստուն թագավոր ունեն, և փառք տվեցին Աստծուն:

*Համարակալի՛ր նկարները՝ 1, 2, 3, 4, 5, 6, ցույց տալով, թե ինչպե՛ս պատահեց:*





Սողոմոնը թագավոր է դառնում:

Սողոմոնը փառք է տալիս Աստծուն:





Երկու կին եկան Սողոմոն արքայի մոտ:

Սողոմոն թագավորը երազ է տեսնում:





Սողոմոն արքան պարզում է երեխայի իրական մորը:

Սողոմոն թագավորը հրամայում է երկու մասի բաժանել մանուկին:

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## *Հիսուսն իմաստություն է տալիս մեզ*

Հիսուսը սովորեցնում է մեզ իմաստուն լինել: Նա օգնում է մեզ լավ ընտրություններ կատարել: Ահա մի քանի եղանակներ, որ նա թելադրեց իր հետևորդներին գործադրել:

Օգտագործի՛ր գունային հուշումները՝ բաց թողնված տառերը լրացնելու համար: Ապա կարդա՛, թե ի՞նչ ուսուցանեց Հիսուսը:

ա  ե  ի  ո  ը

1. Բ ___ րի՛ եղիր մյուսների հանդեպ:
2. Հ ___ գ ___ աղքատների մասին:
3. Ս ___ ր ___ ր և խնամի՛ր երեխաներին:
4. Միշտ ճիշտ ___ խ ___ սի՛ր:
5. Հ ___ րգի՛ր ծնողն ___ րիդ:

# ԻՄԱՍՏՈՒՆ ՏՂԱՄԱՐԴԻԿ ԵՎ ԿԱՆԱՅՔ, ՈՐ ՍԻՐՈՒՄ ԷԻՆ ԱՍՏԾՈՒՆ



Ժամանակով Եգիպտոսում ապրում էին մարդ ու կին, ովքեր աղոթում էին, որ Աստված իրենց իմաստուն դարձնի: Նրանք անում էին այն ամենը, ինչը հաճելի էր Աստծուն: Նրանք ապրում էին անապատում, աշխատում և աղոթք անում ամեն օր: Մարդիկ այցելում էին նրանց և աղոթում նրանց հետ: Մարդիկ դիմում էին նրանց օգնության, որպեսզի ընտրեն լավը վատից:

*Գիտե՛ս մեկին քո ընտանիքից, եկեղեցուց կամ քաղաքից, ով կարող է օգնել քեզ ընտրելու լավը վատից: Շրջագծի՛ր այն բաները, որոնք նա կօգներ քեզ ընտրել:*

Վիգենի ընկերն ուզում է, որ նա գողանա շոկոլադը:



* Վերցրո՛ւ շոկոլադը:

* Մի՛ գողացիր:

Հոգևոր Բառարան

**Ի մ ա ս տ ո ւ թ յ ո ւ ն`**

իմանալ և ընտրել այն, ինչ ճիշտ է և լավ:

Ոսկանի ընկերը փորձում է կռվել նրա հետ:



* Մի՛ կռվիր :

* Խփի՛ր նրա դեմքին:

# ԱՌԱԿՆԵՐԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ ՄԵԶ ԻՄԱՍՏՈՒՆ ԼԻՆԵԼ

Առակներն ասվածաշնչային ասույթներ են, որոնք սովորեցնում են մեզ ինչպե՛ս իմաստուն լինել: Ահա մի հատուկ խրատ երեխաների համար:



*Լսի՛ր, որդյա՛կ, հորդ խրատը և մի՛ մերժիր մորդ պատվիրանը, որպեսզի շնորհի պսակ կրես քո գլխին և ոսկե մանյակ` քո պարանոցին։*

Առակներ 1. 8-9

## ՏԱՆԸ` ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սողոմոնի պատմությունը մեր աշակերտներին ներկայացնում է իմաստության օրինակներ, որոնք ունեցել են նրանց նախահայրերը: Սողոմոնն իր առջև ուներ իր հոր` Դավթի օրինակը, որի հավատարմությունը Աստծուն և արդար կյանքը ներշնչում էին նրան խնդրել Աստծո օրհնությունը: Ձեր երեխաները նույնպես ակնածանքով են նայում ձեզ` իրենց ծնողներին, ովքեր ճիշտ որոշումներ են կայացնում:

Սողոմոնն աղոթում էր իմաստության շնորհ ստանալու համար` իր հույսը դնելով Աստծո սիրառատ ողորմածության վրա: Աստծուց իմաստությամբ օժտված լինելը երևում է երկու մայրերի վեճը լուծելու հայտնի պատմության միջոցով:

Դասը նաև ներկայացնում է Հիսուսի ուսուցումները` որպես կյանքի ամենօրյա ուղեցույց: Երեխաները ծանոթացան բարեպաշտ ու առաքինի մարդկանց օրինակին, որոնք ապրում էին Եգիպտոսի անապատում: Ծատերը գնում էին նրանց մոտ խորհուրդ ստանալու և առաքինի կյանքով ապրելու համար: Ձեր երեխաները նույնպես ունեն բարեկամներ, հարևաններ և ընկերներ, ովքեր կարող են օգնել նրանց ընտրելու ճիշտը սխալից և սովորեցնելու նրանց արժեքներ` հաստատված Հիսուս Քրիստոսի պատգամների վրա:

Ընտանիքով ընտրե՛ք և կատարե՛ք հետևյալ առաջարկները որքան հնարավոր է:

1. Իբրև հիշեցում ապրելու Աստծո պատվիրանների համաձայն` թող ձեր երեխան պատկերի մի նկար` ա/ լավ վերաբերվելով մյուսներին, բ/ հոգալով կարիքավորների պետքերը, գ/ հարգելով ծնողներին:
2. Թղթի վրա գրե՛ք Առակներ 1. 8-9 տողը մեծ տառերով: Թող ձեր երեխան զարդանկարի և այն փակցրեք բոլորին տեսանելի մի տեղում:
3. Հնարավորությո՛ւն ստեղծեք ձեր երեխաների հետ այցելել ձեր ընտանիքի կամ շրջապատի հարգված տարեց անձանց և զրուցել նրանց հետ: Թող ձեր երեխան ասի, թե ինչպե՛ս այդպիսի մարդիկ արտահայտում Աստծո սերը նրանց նկատմամբ:

ԴԱՍ 22

# ՄԱՐԻԱՄՆ ԱՅՑԵԼՈՒՄ Է ԻՐ ԶԱՐՄՈՒՀՈՒ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ

**«ԻՄ ԱՄԲՈՂՋ ՀՈԳՈՎ ՓԱՌԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՏԻՐՈՋԸ ԵՎ ՈՒՐԱԽ ԵՄ ԻՄ ՓՐԿԻՉ ԱՍՏԾՈՎ»:**

**Հմմտ. Ղուկաս 1.47**

## Հայտնագործենք

Ունե՞ս հորեղբայր կամ հորաքույր, քեռի կամ մորաքույր: Իսկ նրանք ունե՞ն երեխաներ: Եթե այո, ուրեմն նրանք քո զարմիկներն ու զարմուհիներն են:

Զարմիկներն ու զարմուհիները միասին շատ ուրախ ժամանակ են անցկացնում: Նրանք խաղում են միասին և օգնում իրար:

*Գրի՛ր քո զարմիկներից ու զարմուհիներից մի քանիսի անունները ներքևի կետգծերի վրա:*

**Իմ զարմիկը՝** ..................................................

**Իմ զարմուհին՝** ..................................................



**Իմ հորեղբայրը կամ քեռին**



**Իմ հորաքույրը կամ մորաքույրը**

.................................................. **Իմ զարմիկը**

.................................................. **Իմ զարմուհին**

*Աստվածաշնչից իմացի՛ր, թե Մարիամն ինչպե՞ս հանդիպեց իր զարմուհու հետ:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## Մարիամն այցելում է իր զարմուհի Եղիսաբեթին

Ըստ Ղուկ. 1.26-56

Մարիամն ապրում էր Նազարեթում: Մի օր հրեշտակն ասաց նրան.

- Ես Գաբրիելն եմ՝ Աստծո հրեշտակը: Դու պիտի որդի ունենաս և նրա անունը Հիսուս կդնես: Նա թագավոր պիտի լինի, ինչպես Դավիթ արքան:

Մարիամը հարցրեց.

- Ինչպե՞ս դա կլինի: Ես դեռ ամուսնացած չեմ: Հրեշտակը պատասխանեց.

- Մի՛ մտահոգվիր, Աստված Իր Սուրբ Հոգին կուղարկի քեզ վրա, և դու երեխա, կունենաս: Աստծո համար անհնար բան չկա: Տե՛ս քո զարմուհի Եղիսաբեթը շուտով երեխա կունենա՝ չնայած շատ ծեր է: Մարիամը հավատաց հրեշտակին և ասաց.

- Ես ահա մնում է Տիրոջ աղախինը և կանեմ այն ամենը, ինչ Աստված է ուզում:



Մի քանի օր հետո Մարիամը որոշեց այցի գնալ իր զարմուհուն: Եղիսաբեթն ամուսնու՝ Զաքարիայի հետ ապրում էր բարձրադիր շրջանում: Մարիամը կապեց իրերը և պատրաստվեց մեկնելուն: Վաղ առավոտյան նա սկսեց քայլել լեռնակողմ փանող ոլորապտույտ, հողե ճանապարհով: Շուտով երևաց զարմուհու տունը: Նրա սիրտը հուզմունքից սկսեց ավելի արագ խփել: Վերջապես նա հասավ նրանց տուն և թակեց դուռը:


4


3


2


1

- Ողջո՛ւյն զարմուհի, բացի՛ր դուռը խնդրում եմ, ես եմ՝ Մարիամը:



Եղիսաբեթը բացեց դռան փականը և, ժպիտը դեմքին առաջ գալով, գրկաբաց ընդունեց Մարիամին: Նույն պահին երեխան խաղաց նրա որովայնում: Եղիսաբեթը լցվեց Սուրբ Հոգով և ուրախությունից բացականչեց.

**- Մարիա՛մ, դու օրհնյալ ես կանանց մեջ,** և օրհնյալ է քո որովայնի պտուղը ... Երանի՜ է քեզ, որ հավատացիր Աստծո խոսքին, որ պիտի պատահի:

5

Մարիամն ասաց.

- Իմ ամբողջ հոգով փառավորում եմ Տիրոջը և ուրախ եմ իմ փրկիչ Աստծով: Աստված լսեց Իր խոնարհ աղախնի աղոթքը: Այսուհետ բոլոր ազգերը պիտի ասեն, որ Աստված օրհնել է ինձ»:

Մարիամը երկար ժամանակ մնաց իր զարմուհի Եղիսաբեթի փանը: Նրանք երկուսով խոսում էին իրենց ծնվելիք որդիների մասին: Մարիամն ու Եղիսաբեթն ուզում էին իմանալ, թե Աստված ի՞նչ ծրագրեր ունի իրենց որդիների համար: Երեք ամիս անց Մարիամը վերադարձավ տուն:

# Կ ՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Զարմուհի Եղիսաբեթը մեծարում է Կույս Մարիամին

Եղիսաբեթը գիտեր իր սրտում, որ իր զարմուհի Մարիամն առանձնահատուկ է: Մարիամը պետք է դառնար Հիսուսի՝ Աստծո Որդու մայրը:

Եղիսաբեթը փառաբանում էր Աստծուն և օրհնում Մարիամին: Նա խնդրեց, որ Մարիամը որոշ ժամանակ մնա իրենց ընտանիքի հետ: Երկու զարմուհիները վայելում էին միասին լինելը, քանի որ երկուսն էլ սպասում էին իրենց որդիների ծննդյանը:

*Հիշո՛ւմ ես այն պահը, երբ այցելել ես քո զարմիկին կամ զարմուհուն: Նկարի՛ր մի պատկեր, որը ցույց կտա, թե ի՛նչ եք արել միասին: Մի քանի բառով գրի՛ր, թե ինչպե՛ս էիր քո զարմիկի հետ փառավորում Աստծուն: Ապա գրի՛ր մի քանի բարի խոսքեր, որ զարմիկներով ասել եք իրար:*

**Եղիսաբեթի օրհնությունը.**

**«Մարիա՛մ, օրհնյալ ես դու կանանց մեջ»:**

Խոսքեր՝ փառաբանելու Աստծուն

______________________

______________________

______________________

Լավ խոսքեր՝ իմ զարմիկին

______________________

______________________

______________________

# ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄԸ
## ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ՄԵԶ ՓԱՌԱԲԱՆԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Մարիամը շնորհակալ էր Աստծուց, որ իրեն էր ընտրել դառնալու Հիսուսի մայրը: Նա օրհներգում էր Տիրոջը և փառք տալիս: Ահա նրա օրհներգի խոսքերը, որոնք գրված են Ղուկասի Ավետարանում: Մենք ամեն օր երգում ենք այդ խոսքերը եկեղեցում:

*Օգտագործի՛ր գունային հուշումները՝ լրացնելու բաց թողնված տառերը: Արդյունքում կպարզես, թե ի՞նչ էր Մարիամն ասում Աստծո մասին:*

**Հոգևոր Բառարան**

**Աղոթի՛ր մեզ համար՝**

մենք կարող ենք
խնդրել Մարիամին և
բոլոր սուրբերին՝
աղոթելու մեզ համար:

ա ե ի օ



# ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐՆ ԱՂՈԹՈՒՄ Է ՄԵԶ ՀԱՄԱՐ

Կույս Մարիամը սիրում և խնամում է բոլորիս՝ ինչպես իր որդի Հիսուսին: Մենք կարող ենք խնդրել նրան միշտ աղոթելու մեզ համար: Եկեղեցում մենք խնդրում ենք նրա բարեխոսությունը՝ աղոթքի հետևյալ փողը երգելիս:

*Մա՛յր Սուրբ, բարեխոսի՛ր մեզ համար:*




## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Առաջին այս գլխում, որը նվիրված էր երեխայի մեծ ընտանիքին, Մարիամի պատմությունը զարմուհուն՝ Եղիսաբեթին այցելելու մասին պարունակում է այն բոլոր տարրերը, որոնցով բնորոշվում է զարմիկների հարաբերությունը: Վեցամյա երեխաները կարող են սա հասկանալ իրենց փորձառության միջոցով, որ զարմիկների կամ զարմուհիների հետ կարող են խաղալ, լավ ժամանակ անցկացնել, ընտանեկան կարևոր զանազան առիթներ նշել, ինչպես օրինակ՝ երեխայի ծնունդ, հարսանիք կամ պարզ այցելություն: Նրանք գուցե հիշեն նաև այն պահերը, երբ զարմիկներ լինելով օգնել են իրար:

Մարիամը գնաց իր զարմուհուն այցելելու, երբ ստացավ Գաբրիել հրեշտակապետի ավետիսը Աստծո Որդու մայրը դառնալու վերաբերյալ: Նա այցելեց իր զարմուհուն իր կյանքի մի շատ կարևոր ժամանակ, որպեսզի կիսի իր ուրախությունը և զալիքի բարի սպասումները: Թերևս երիտասարդ Մարիամը նույնպես կարիք ուներ իրենից տարիքով մեծ զարմուհու աջակցության ու խորհրդի:

Այս դասի միջոցով մենք վեց տարեկան երեխաների համար պարարտ հող ենք նախապատրաստում զգալու հատուկ հարաբերությունը Աստվածամոր հետ՝ նրանց հոգում սերմանելով պատիվն ու մեծարումը, որ Եկեղեցին տածում է նրան և այն վստահությունը, որով մենք խնդրում ենք նրա աղոթքն ու բարեխոսությունը:

1. Ուրախությա՛մբ լսեք, երբ որ ձեր երեխան պատմի Մարիամի՝ Եղիսաբեթին այցելելու պատմությունը:
2. Հաստատե՛ք այն մեծարումը, որ Եղիսաբեթը տվեց Մարիամին՝ նրան կոչելով «օրհնյալ կանանց մեջ»: Նույնն ասաց նաև Գաբրիել հրեշտակապետը՝ ցույց տալով, թե ինչպիսի՜ նվիրում պիտի ունենանք Աստվածածնի հանդեպ: Եթե ունեք Հիսուսի ծննդյան սրբանկարը, այն դրե՛ք ձեր տան աղոթքի անկյունում, որպեսզի ձեր ընտանիքը կարողանա տեսնել Աստվածածնին և մեծարել նրան:
3. Ձեր երեխայի հետ աղոթե՛ք՝ խնդրելով. «Մայր Սուրբ բարեխոսի՛ր մեզ համար» ամեն անգամ, երբ աղոթելու պրամադրություն կունենանք:
4. Եկեղեցում թո՛ւյլ տվեք, որ ձեր մանուկը նկատի առնի, որ Սուրբ Ծննդյան սրբապատկերը՝ Աստվածամայրը մանուկ Հիսուսը գրկին, միշտ զետեղված է Հայ Եկեղեցու մայր խորաններում:

ԳԼՈՒԽ Է

# ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՀՈԳԱՏԱՐ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՆԴԵՊ

Իմ ընտանիքը հոգ է տանում իմ մասին և ես էլ՝ նրանց: Ծնողները խնամում են իրենց զավակներին: Նրանք հետևում են, որ իրենց երեխաները կուշտ լինեն, առողջ մնան և միշտ ապահով ապրեն: Նրանք երեխաներին դպրոց են տանում: Եղբայրներն ու քույրերն օգնում և ուշադրություն են դարձնում իրար:



ԳԼՈՒԽ Է

# ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՀՈԳԱՏԱՐ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՆԴԵՊ



## Ծնողների համար

Հոգատարությունը, որ ընտանիքները ցուցաբերում են մեկը մյուսի նկատմամբ մարմնավորվում է աստվածաշնչային հետևյալ չորս պատումների միջոցով: Ծնողական խնամքը զավակների հանդեպ ներկայացվում է Հայրոսի աղջկա հարության և հարյուրապետի որդու բժշկվելու դրվագներում: Ծնողի ցանկությունն իր զավակներին լավագույնը տալը ներկայացվում է մայրերի պատմության մեջ, որոնք իրենց երեխաներին բերում են Հիսուսի մոտ օրհնվելու: Մարիամի և Մովսեսի, ինչպես նաև Հովսեփի՝ սովի ժամանակ իր եղբայրներին ուտելիք տալու պատմությունը ցույց է տալիս հարազատների սերն ու հոգատարությունը միմյանց նկատմամբ:

ԴԱՍ 23

# ՄԱՐԻԱՄԸ ՓՐԿՈՒՄ Է ԵՂԲՈՐԸ

**«ՄԱՆԿԱՆ ՔՈՒՅՐԸ ՀԵՌՎԻՑ ՀԵՏԵՎՈՒՄ ԷՐ՝ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԹԵ ԻՆՉ ԿՊԱՏԱՀԻ ՆՐԱՆ»:**

**Ելք 2.4**

## Ճանաչենք

Երեխաներին խնամելու համար մայրիկներն օգնության կարիք ունեն: Ավագ եղբայրներն ու քույրերը սիրում են պահել իրենց փոքրիկ եղբորը կամ քրոջը և խաղալ նրանց հետ:



Երբևէ խնամե՞լ ես քո փոքրիկ եղբորը կամ քրոջը:

*Նայի՛ր նկարներին և նշի՛ր այն, որը դու արել ես՝ մայրիկիդ օգնելու համար:*





*Աստվածաշնչի պատմության մեջ գտե՛ք, թե ինչպե՞ս Մարիամն օգնեց իր եղբորը:*

## ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

# Մարիամը փրկում է փոքրիկ Մովսեսին

Ըստ Ելք 1-2.10

Հովսեփի բարեկամներն ապրում էին Եգիպտոսում: Նրանք կոչվում էին հրեաներ: Եգիպտոսի թագավորը չէր սիրում հրեաներին: Նա հրեաներին ամենաշատն էր աշխատեցնում: Մի օր նա հրամայեց, որ հրեա բոլոր նորածին փղաներին սպանեն: Շատ մայրիկներ լացում էին, երբ իրենց փղա երեխաներին վերցնում, տանում էին: Մի հրեա մայրիկ տանը թաքուն պահում էր իր որդուն: Մի օր եղեգից զամբյուղ հյուսեց և այն պատեց ձյութով: Ապա դրեց իր որդուն մեջը:



- Մարիա՛մ, արի գնանք դեպի գետը, - ասաց մայրն իր դստերը: Մայրն զգուշությամբ զամբյուղը դրեց գետափին աճած խոտերի մեջ:

- Մայրի՛կ, ես կսպա-սեմ այստեղ և կհսկեմ եղբորս, - շշնջաց Մարիամը: Եղեգների ետևում կուչ եկած Մարիամը մենակ նայում էր եղբորը: Որոշ ժամանակ անց նա կանանց խոսակցության ձայներ լսեց: Նրանք եկել էին գետում լողանալու: «Նրանք հաստատ փարավոնի պալատից են», - մտածեց նա: Փարավոնի դուստրը նկատեց ջրի վրա լողացող զամբյուղը: Նա իր աղախիններից մեկին ուղարկեց զամբյուղը բերելու: Արքայադուստրը նայեց զամբյուղի մեջ և ասաց. «Սա պետք է որ հրեա փղաներից լինի: Ի՜նչ մեղք է, խեղճ փոքրիկը լաց է լինում»:

Մարիամն արագ գնաց փարավոնի աղջկա մոտ ու ասաց.

- Ուզո՞ւմ ես, որ հրեա մի դայակ կին կանչեմ, որ կերակրի նրան: Փարավոնի աղջիկն ասաց՝ գնա՛:

Երբ Մարիամը վերադարձավ մոր հետ, փարավոնի դուստրն ասաց նրան.

- Վերցրու՛ այդ մանկանը և կերակրի՛ր նրան ինձ համար: Ես կտամ քո վարձը:

Մանուկը կերակրվեց և օր օրի մեծանում էր: Մարիամն այնքան ուրախ էր



եղբորն օգնելու համար: Երբ մանուկը բավական մեծացավ, Մարիամի մայրը նրան բերեց պալատ, փարավոնի դստեր մոտ, ով որդեգրեց երեխային: Նրա անունը դրեցին Մովսես:

*Պարմության մեջ գտի՛ր գունավոր տառերը և դրանք լրացրո՛ւ ըստ իրենց համապատասխան գույնի: Արդյունքում կգտնես, թե ի՞նչ արեց Մարիամը՝ եղբորն օգնելու համար:*

Մարիա __ ն օգ __ եց փր __ ել իր փո __ րիկ եղբ __ որը՝
Մ ով __ ե __ ին:

## ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

### Խոսրովադուխտ իշխանուհին օգնում է եղբորը

Խոսրովադուխտը ցանկանում էր օգնել եղբորը՝ Տրդատ արքային: Նա շատ ծանր հիվանդ էր: Բայց նա շատ ուրախ էր, որ իր ընկերը՝ Գրիգորը, պատմել էր իրեն Հիսուսի մասին: Մի գիշեր նա աղոթում էր. «Տե՛ր, Հիսո՛ւս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, խնդրում եմ օգնի՛ր իմ եղբորը և նրան առողջացրո՛ւ»:



Որոշ ժամանակ հետո արքայաքույրը երազ տեսավ: Երազում հրեշտակն ասաց. «Խոսրովադո՛ւխտ, Աստված լսեց քո աղոթքը: Հիսուսը կօգնի քո ընկերոջը՝ Գրիգորին, որպեսզի նա բուժի քո եղբորը»:

Տրդատ թագավորը Գրիգորին բանտն էր գցել, որովհետև նա Հիսուս Քրիստոսին էր պաշտում: Իշխանուհին կերակրում էր նրան՝ խնդրելով, որ նա աղոթի և օգնի Տրդատ արքային: Գրիգորը խղճաց հին ընկերոջը և աղոթեց թագավորի համար. «Իմ սիրելի՛ ընկեր, Հիսուս Քրիստոսի անունով բուժվի՛ր»: Արքան առողջացավ: Այժմ նա հավատում էր, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է: Խոսրովադուխտ իշխանուհին շատ երջանիկ էր եղբորն օգնելու և օգտակար լինելու համար:

# ԵՍ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՕԳՆԵԼ

Ինչպես Մարիամը, այնպես և Խոսրովադուխտը քույրեր էին, ովքեր օգնեցին իրենց եղբայրներին:

> **Հոգևոր Բառարան**
>
> **Աղոթել՝**
>
> խոսել Աստծո հետ:

*Գծով նրանց օգնությունը պատկերող նկարները միացրու՛ նրանց անուններին:*



**Խոսրովադուխտ**





Մարիամ



*Ընտրի՛ր այն նկարը, որը ցույց կտա, թե ինչպե՛ս կօգնես եղբորդ կամ քրոջդ: Կարող ես մեկից ավելի ընտրել: Հետևի՛ր ուսուցչի ցուցումներին:*









**եղբայր**

**քույր**









## ԾՆՈՂՆԵՐՆ ՈՒ ՔՈՒՅՐԵՐԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ ԱՂՈԹԵԼ

Ես սովորել եմ այս աղոթքը իմ _______________ եղբորից/քրոջից: Ես աղոթում եմ ամեն օր դպրոց գնալուց առաջ:

Իմաստություն Հոր՝ Հիսո՛ւս,

տո՛ւր ինձ իմաստություն բարին,





փրկի՛ր ինձ չար մտքերից, խոսքերից ու

գործերից և ողորմի՛ր քո արարածներին

ու նաև ինձ:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սա այս գլխի չորս դասերից առաջինն է, որը նվիրված է ընտանիքի անդամների՝ միմյանց նկատմամբ ունեցած հոգատարությանը: Երեխաների համար ընտանիքը շատ կարևոր իրականություն է: Այստեղ են նրանք ունենում պատկանելության զգացում, իրենց ապահով զգում և պաշտպանվում ծնողների և ընտանիքի մյուս անդամների կողմից:

Երեխաներին Մովսեսի մանկության դեպքերը ներկայացնելը հնարավորություն է տալիս տեսնել, թե ինչպե՞ս են ընտանիքի անդամները հոգ տանում միմյանց մասին: Մասնավորապես այս պատմությունն օգնում է երեխաներին ճանաչել Մարիամի սերը և հոգատարությունը իր եղբոր հանդեպ: Այս պատմության միջոցով մենք հույս ունենք, որ երեխաները կդառնան ավելի իրազեկված և կգնահատեն իրենց արյունակից հարազատների սերը, խնամքը և ընկերակցությունը:

Այս դասում նաև ներկայացվում է մեկ այլ քրոջ՝ Խոսրովադուխտ իշխանուհու մասին պատմությունը, ով հոգ տարավ իր եղբոր մասին: Իր նախաձեռնության շնորհիվ ոչ միայն Տրդատ թագավորը բժշկվեց, այլ նաև հայոց արքան ճանաչեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի ամենափրկիչ սերը և զորությունը:

Սբ. Ներսես Շնորհալու աղոթքի տունը ևս ընդգրկված է այս դասում՝ իբրև աղոթք, որ երեխան գուցե սովորած լինի իր ավագ եղբորից կամ քրոջից:

Սովորեցրե՛ք նրանց աղոթքը և հաճախ աղոթե՛ք ձեր երեխաների հետ:

# ԾՆՈՂՆԵՐԸ ՀՈԳ ԵՆ ՏԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**«ՄԻ՛ ՎԱԽԵՑԻՐ, ԱՅԼ ՄԻԱՅՆ ՀԱՎԱՏԱ՛, ԵՎ ՔՈ ԱՂՋԻԿԸ ԿԼԱՎԱՆԱ»:**

**Ըստ Ղուկասի 8.50**

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



Մեր ծնողները ցույց են տալիս մեր նկատմամբ իրենց սերը և հոգատարությունը շատ եղանակներով:

* **Նրանք հետևում են, որ լավ ուտենք:**
* **Նրանք լավ հագցնում են մեզ:**
* **Նրանք սովորեցնում են մեզ անվտանգության կանոնները:**
* **Նրանք բժիշկ են կանչում, երբ հիվանդանում ենք:**







*Նկարի՛ր մի բան՝ ցույց տալու, թե ծնողներդ ի՞նչ են արել քեզ խնամելու համար:*

*Ապրվածաշխարհի այսօրվա պատմություններից պարզի՛ր, թե ինչպե՞ս են հայրիկներն ու մայրիկները հոգ տանում իրենց երեխաների մասին:*

## ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

# Երկու երեխաներն էլ լավացան

Ըստ Ղուկ. 8.40, Հովհ.4.46-54

Հիսուսը վերադարձավ Գալիլիա, որտեղ նրան շատ մարդիկ էին սպասում: Նրանք կարոտել էին Հիսուսի բարությանը: Հայրոս անունով մի մարդ վազելով մոտեցավ Հիսուսին և ընկավ նրա ոտքերը: «Ինչո՞ւ է այս մարդը ծնկի իջել Հիսուսի առաջ: Ի՞նչ է նրանից ուզում այս կարևոր ժողովրդապետը», - հարցրեցին ոմանք: Հայրոսն ասաց. «Միանուճար աղջիկս շատ հիվանդ է: Նա ընդամենը 12 տարեկան է, վախենում եմ, որ մահանա: Հիսո՛ւս, աղաչո՛ւմ եմ, մեր տուն արի և օգնի՛ր, որ նա լավանա»:



Հիսուսը լսեց Հայրոսին, բայց չկարողացավ միանգամից պատասխանել նրան: Մարդիկ հրմշտում էին իրար, որպեսզի ավելի մոտենան Հիսուսին: Հենց այդ պահին մեկը Հայրոսի տնից եկավ և ասաց նրան. «Քո դուստրը քիչ առաջ մահացավ, այլևս մի՛ անհանգստացրու Վարդապետին»: Սակայն Հիսուսն ասաց Հայրոսին. «Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, և նա կապրի»: Միասին եկան Հայրոսի տուն: Հիսուսը սենյակից դուրս հանեց բոլորին, ներս թողեց միայն աղջկա հայրիկին ու մայրիկին և պատվիրեց, որ դադարեցնեն լացուկոծը: Ապա ասաց. «Նա մահացած չէ, այլ քնած է»: Շատերը ծիծաղեցին նրա վրա, քանի որ գիտեին, որ աղջիկը մահացել էր:

Հիսուսը բռնեց աղջկա ձեռքից և ասաց. «Վե՛ր կաց, մանո՛ւկ»: Աղջնակը միանգամից վեր կացավ: Հիսուսը պատվիրեց, որ նրան ուտելու բան տան: Ծնողներն ապշել էին, բայց և շնորհակալ էին և շատ երջանիկ:



Կափառնայումում ապրում էր մի բարձրաստիճան զինվորական, որի որդին շատ ծանր հիվանդ էր: Նա եկավ ու աղաչեց Հիսուսին.

- Խնդրում եմ, Տե՛ր, շտապի՛ր, քանի դեռ որդիս չի մահացել: Հիսուսը պատասխանեց.

- Գնա՛, քո որդին կլավանա: Մարդը հավատաց Հիսուսի խոսքին և քայլեց դեպի տուն:

Տուն չհասած՝ ճանապարհին ծառաները մոտեցան նրան ու հայտնեցին, որ տղան արդեն լավ է: Հայրը հարցրեց նրանց. «Ե՞րբ նա սկսեց լավանալ»: Պատասխանեցին. «Երեկ, մոտ ժամը մեկին»: Հայրը հասկացավ, որ դա հենց այն ժամն էր, երբ Հիսուսն ասաց, թե իր որդին կլավանա: Բոլորը նրանց ընտանիքում հավատացին Հիսուսին:

*Հիսուսի խոսքերը մխիթարեցին երկու հայրերին: Գունավորի՛ր հանելուկը, որ գտնես, թե Հիսուսն ի՞նչ ասաց նրանցից յուրաքանչյուրին:*

Քո աղջիկը






1 2 3 4 5

Քո որդին



# Տերն իմ Հովիվն է

Հոգևոր Բառարան

**Հովիվ՝**
ոչխարներ արածեցնող և հսկիչ:

*«Տերն իմ հովիվն է,*

*և ինձ ոչինչ չի պակասի:*



*Դալար վայրերում*
*նա ինձ բնակեցրեց*

*և հանդարտ ջրերի մոտ ինձ սնուցեց:*

*Դու իսկապես լավ հովիվ ես,*

*քանի որ*
*առաջնորդեցիր ինձ*

*ապահով*
*ճամփաներով:*

*Եթե նույնիսկ անցնեմ խավար դաշտերով, չեմ վախենա:*

*Դու ինձ հետ ես, և ես ինձ ապահով եմ զգում քո հովվական գավազանը տեսնելիս:*

Հմմտ. Սաղմոս 22

# ՀԻՍՈՒՍԸ ԲԱՐԻ ՀՈՎԻՎՆ Է

Հիսուսն ասաց իր ընկերներին. «Ես եմ Բարի Հովիվը»:

Ընտրի՛ր բառերը ներքևի ցանկից և լրացրո՛ւ նախադասությունները: Արդյունքում կգտնես չորս պատճառներ, թե ինչո՞ւ է Հիսուսը քո Բարի Հովիվը:

Հիսուսն օգնում է ինձ կատարել ______________ ընտրություններ:

Հիսուսը մխիթարում է ինձ, երբ ______________ եմ լինում:



Հիսուսն ______________ է պահում ինձ:

Հիսուսն օգնում է ինձ _ ______________ լինել:



## Ես աղոթում եմ

Մենք կարող ենք միշտ դիմել Հիսուսին օգնության համար թե՛ առողջ և թե՛ հիվանդ ժամանակ: Ամեն օր արտասանի՛ր հետևյալ աղոթքը:



երկնավոր, իմ կյանքը քո



է ամեն ժամ, և ապավինում եմ քո

սուրբ



. Ամեն:

## Տանը՝ ընտանիքի հետ

Այս դասում ներկայացված երկու պատմությունները ցույց են տալիս ծնողների անսահման սերը, ովքեր ձգտում են փրկել իրենց երեխաներին՝ հույսը դնելով Հիսուսի նկատմամբ ունեցած իրենց հավատի վրա:

Ձեր երեխան արդեն շատ պարագաներում տեսել է ձեր սերը և հոգատարությունը՝ հատկապես հիվանդ ժամանակ: Ջերմության տենդի մեջ վառվող երեխան իրեն ապահով ու մխիթարված է զգում, երբ ծնողները միջոցներ են ձեռնարկում տաքությունը դեղերով իջեցնելու, ըստ ամենայնի խնամելու և հարկ եղած դեպքում բժիշկ տուն կանչելու համար: Որքա՜ն հրաշալի և հեշտ կլինի ձեր երեխայի համար սովորել, որ ծնողներից ստացած այդ նույն հոգատարությունը Հայրոսին ու բարձրաստիճան զինվորականին առաջնորդեց Հիսուսի մոտ՝ խնդրելու Տիրոջ օգնությունը: Այս պատմության միջոցով երեխաները կարող են մխիթարվել՝ իմանալով, որ ծնողները հոգ են տանում իրենց մասին՝ Հիսուս Քրիստոսին որպես ապավեն ունենալով:

1. Թող ձեր երեխան վերապատմի սովորած երկու պատմությունները: Ապա հանե՛ք Աստվածաշունչը և գտե՛ք այդ պատմությունները միասին: (Ղուկաս 8.40-56 և Հովհաննես 4.46-54)
2. Երեխային հանձնարարե՛ք գծանկարելու պատմություններից մեկը:
3. Հիշե՛ք մի ժամանակ, երբ նա հիվանդ է եղել, և ինչպե՞ս եք խնամել նրան: Թերևս քահանային խնդրել եք աղոթել ձեր երեխայի համար:
4. Միասի՛ն սովորեք դպրոցում անցած աղոթքը: Դասում նշված է աղոթքի միայն առաջին նախադասությունը: Աղոթքը քաղված է Հանգստյան ժամերգությունից, որը սովորաբար կատարվում է Մեծ Պահքի ընթացքում:
5. Սովորությո՛ւն դարձրեք աղոթել ձեր երեխայի հետ՝ մանավանդ հիվանդ ժամանակ, և խնդրե՛ք, որ Հիսուս Քրիստոսը բուժի նրան:

# ՄԱՅՐԻԿՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԲԵՐՈՒՄ ԵՆ ՀԻՍՈՒՍԻ ՄՈՏ

«ԹՈ՛ՅԼ ՏՎԵՔ ԱՅԴ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԳԱԼ ԻՆՁ ՄՈՏ ԵՎ ԱՐԳԵԼՔ ՄԻ՛ ԵՂԵՔ ՆՐԱՆՑ»:
**Մարկոս 10.14**

## ՃԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ծնողները լավ բաններ են անում իրենց երեխաների համար:

***X** նշանը դի՛ր յուրաքանչյուր նկարի կողքին, որը ցույց կտա ծնողներիդ արածը քեզ համար:*









*Դրանցից մեկը նկարի՛ր ինքդ այստեղ:*

Ասպվածաշնչի պատմության մեջ գտի՛ր, թե մայրիկներն ի՛նչ արեցին իրենց երեխաների համար:

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ
## Մայրիկները երեխաներին բերում են Հիսուսի մոտ
Ըստ Մատթ. 19.13-15, Մարկ. 10.13-16

Մի գեղեցիկ գարնանային օր Հիսուսը եկավ Հորդանան գետի արևելյան կողմում գտնվող մի քաղաք: Երբ լուրը հասավ ժողովրդին, բոլորը թողեցին իրենց գործերը և շտապեցին դաշտավայր, Հիսուսի մոտ: Դատարկ դաշտը միանգամից լցվեց բազմաթիվ մարդկանցով: Ժողովուրդն այնքան էր սիրում Հիսուսին, որ հետևում էր նրան ուր-որ գնար:

Ժողովրդի մեջ կային շատ երեխաներ:«Մայրի՛կ, ինձ բա՛րձր պահիր, որ տեսնեմ Հիսուսին», - ասաց Հակոբը: Բենիամինն ու Մարիամն այնքան էին հուզվել, որ խցկվելով ամբոխի մեջ կարողացան մոտենալ Հիսուսին: Ոմանք սկսեցին բարկանալ: «Լո՛ռ մնացեք: Ձեր երեխաներին ասե՛ք, որ լուռ մնան», - բղավում էին նրանք: Աշակերտները փորձելով կանգնեցնել երեխաներին՝ ասացին. «Մայրե՛ր, նայե՛ք ձեր երեխաներին, նրանց մի՛ թողեք, որ մոտենան Հիսուսին, և թող լուռ մնան»:



Հիսուսը զայրացավ, երբ լսեց այս ամենը: Նա դարձավ դեպի աշակերտները և ասաց. «Թո՛ւյլ տվեք, որ երեխաներն ինձ մոտ գան և մի՛ արգելեք նրանց, քանի որ ես սիրում եմ նրանց»:

Ապա գրկեց փոքրիկներին և դնելով իր ձեռքերին օրհնեց նրանց: Տերը թույլ տվեց, որ մանուկներն իր մոտ գան: Նա ձեռքը դրեց յուրաքանչյուր երեխայի գլխին, խոսեց նրանց հետ և օրհնեց նրանց:

*Ենթադրենք.* *իմքդ քեզ պատկերի՛ր այս պատմության մեջ:* Ենթադրենք, թե ծնողներդ քեզ բերել են Հիսուսի մոտ: Նա նստած է բարձրադիր տեղում իր ընկերների հետ:

*Մտածի՛ր. իմքդ քեզ տու՛ր հետևյալ հարցերը.*

* Հիսուսը տեսնո՞ւմ է քեզ:
* Կարողացա՞ր բարձրանալ նրա մոտ:
* Ի՞նչ ասացիր Հիսուսին:
* Իսկ Հիսուսն ի՞նչ ասաց քեզ:



Հիսուսն օրհնեց ինձ և ասաց. «Ես **ՍԻՐՈՒՄ** եմ քեզ»:

## ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

### Ծնողներն իրենց երեխաներին բերում են եկեղեցի

Քո ծնունդից հետո ծնողներդ քեզ բերել են եկեղեցի: Նրանք գիտեին, որ իրենց փոքրիկ տղան կամ աղջիկը Հիսուսի օրհնության կարիքն ունի: Եկեղեցի մտար մայրիկիդ գրկում, և քահանան Սուրբ Խաչի նշանով օրհնեց քեզ և ասաց հետևյալ աղոթքը.

*Կարդա՛ այն և օգտագործի՛ր հուշող նկարները:*

«Ո՛վ Տեր,  Քրիստոս, թող Քո շնորհն ու ողորմությունը միշտ լինեն այս  հետ, ով եկել է երկրպագելու Քեզ Քո  որպես նորածին  : Պաշտպանի՛ր նրան չարից, քանի որ բարի ես մեզանից յուրաքանչյուրի հանդեպ»:

**Հոգևոր Բառարան**

**Շնորհ՝**

Աստծո սերը մեր հանդեպ:



# Իմ առաջին օրը կիրակնօրյա դպրոցում

Ի՜նչ լավ է, որ ծնողներդ քեզ եկեղեցու կիրակնօրյա դպրոց են բերել: Նրանց ցանկությունն է, որ սովորես Հիսուս Քրիստոսի՝ մեր Աստծո մասին և սովորես ավելի ու ավելի սիրել Տիրոջը:

Հիշո՞ւմ ես կիրակնօրյա դպրոց հաճախելուդ առաջին օրը: Ո՞վ էր քո ուսուցիչը: Գրի՛ր նրա անունը ներքևի գծի վրա:

Ուսուցչիս անունը ____________________________ է:

*Գրի՛ր կամ նկարի՛ր մի բան, որ սովորել ես կիրակնօրյա դպրոցում:*



# Երգենք Սուրբ Ներսես Շնորհալու հետ

Սուրբ Ներսես Հայրապետը հորդորում է, որ ծնողները զավակներին սովորեցնեն Հիսուսի մասին: Ահա նրա սիրած երգերից մեկը, որը պիտի սովորես.

*«Սուրբ Աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ, որ հարություն առար մեռելներից, ողորմի՛ր մեզ»:*




## Տանը՝ ընտանիքի հետ

Ծնողները գիտեն, թե ինչն է լավ իրենց զավակների համար: Նրանք վստահ են, որ իրենց երեխաները դպրոց են գնում սովորելու և շատ գիտելիքներ ամբարելու համար: Երեխաներին Հիսուսի մոտ բերող մայրիկների պատմությունը նկարագրում է ծնողական հենց այս բնավորությունը:

Երեխաներն իրենց խնամված են զգում տեսնելով մայրերի նախաձեռնությունը, որոնք ձգտում էին իրենց փոքրիկներին անել այն, ինչ լավ է նրանց համար: Հիսուսի գրկաբաց վերաբերմունքը և օրհնությունը զրավում է երեխաների վստահությունը:

Այս դասում աշակերտները ծանոթացան մի աղոթքի, որը ասվում է, երբ նորածին երեխային տանում են եկեղեցի օրհնություն ստանալու համար՝ սովորաբար ծննդյան քառասունքին: Հնում, երբ ծնունդները կատարվում էին տներում, մայրը ծննդաբերությունից հետո 40 օր զամվում էր անկողնին: Այս ամբողջ ընթացքում մայրը զրկված էր եկեղեցի գնալուց, մինչեռ նորածին երեխային ութօրեքին տանում էին մկրտելու: Եկեղեցին խրախուսում է, որ երեխան ծննդից հետո հնարավորինս շուտ մկրտվի: Հետևաբար նորածին զավակի մկրտությունից հետո մայրն ու երեխան միասին առաջին անգամը լինելով պետք է մտնեն եկեղեցի օրհնություն ստանալու:

Դասը նաև շեշտում է երեխայի անդամակցությունը մեկօրյա դպրոցին, որը կլինի ծնողների կողմից երեխայի համար կատարվող մի լավ բան: Վերջինիս հաջորդում է Երեքսրբյանը, որը Սբ. Ներսես Շնորհալին խորհուրդ է տալիս ծնողներին սովորեցնել իրենց երեխաներին հենց որ նրանք կսկսեն խոսել՝ իբրև մաս նրանց հոգևոր զարգացման:

1. Կարդացե՛ք Մատթեոս 19.13-15 կամ Մարկոս 10.13-16 կարճ հատվածը Հիսուսի՝ երեխաներին օրհնելու մասին: Եվ կամ թող ձեր մանուկը վերապատմի այսօրվա դասին անցած պատմությունը:
2. Ձեր զավակի հետ հիշե՛ք այն օրը, երբ նրան իբրև նորածին տարաք եկեղեցի՝ քառասունքի կարգը կատարելու համար: Կարող եք նրան հանձնարարել նկարելու այդ օրվա իրադարձությունն՝ ըստ ձեր պատմածի:
3. Միասին հաճախակի երգե՛ք Երեքսրբյանը, որը դրված է այս էջի սկզբում: Չմոռանա՛ք «Սուրբ Աստված» ամեն անգամ երգելիս խաչակնքվել:

ԴԱՍ 26

# ՀՈՎՍԵՓՆ ՕԳՆՈՒՄ Է ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

**«ՈՐՈՎՀԵՏԵՎ ՔԱՂՑԱԾ ԷԻ, ԵՎ ԻՆՁ ՈՒՏԵԼԻՔ ՏՎԻՔ ...»:**

**Ըստ Մատթեոսի 25.35**

## Հայտնագործենք

Մենք կարող ենք օգնել շատ եղանակներով: Նայի՛ր նկարներին: Ասա՛, թե ինչպե՞ս է յուրաքանչյուր երեխա օգնում մեկին: Նշի՛ր այն մեկը, որը կպապկերեր քո նախընտրած օգնելու եղանակը:







*Պարզի՛ր, թե ինչպե՞ս Հովսեփն օգնեց իր ընտանիքին Աստվածաշնչի մեր այսօրվա պատմության մեջ:*

## ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

# Հովսեփն օգնում է իր ընտանիքին

### Ըստ Ծննդոց 42

Երկար ժամանակ հացահատիկ չէր աճում Քանանի երկրում, որտեղ ապրում էր Հակոբն իր ընտանիքով: Հակոբն ուղարկեց իր որդիներին Եգիպտոս, որպեսզի ցորեն գնեն: Նրա ամենակրտսեր որդին՝ Բենիամինը, չգնաց իր եղբայրների հետ:

Նրանք ճամփորդում էին էշերով: Շաբաթներ անց եղբայրները հասան Փարավոնի պալատ և գտան այն մարդուն, ով զբաղվում էր հացահատիկի վաճառքով: Նրանք խոնարհվեցին այդ պաշտոնյայի առաջ և խնդրեցին հացահատիկ գնել: Նրանք չճանաչեցին, որ այդ պալատականն իրենց եղբայր Հովսեփն է, ում նրանք տարիներ առաջ վաճառել էին Եգիպտոս գնացող քարավաններին: Իսկ Հովսեփը միանգամից ճանաչեց իր եղբայրներին, բայց չասաց, թե ինքն ով է: Ապա հարցրեց.



- Ովքե՞ր եք դուք:

Եղբայրները պատասխանեցին.

- Մենք Քանանից ենք եկել հաց գնելու մեր ընտանիքների համար:

Հովսեփը ձևացրեց, թե չի հավատում նրանց և ասաց եղբայրներին.

- Վերադարձե՛ք տուն և ինձ մոտ բերե՛ք ձեր կրտսեր եղբորը: Այդ դեպքում ես կհավատամ ձեր խոսքերին: Մինչ այդ ես այստեղ կպահեմ ձեզանից մեկին: Եղբայրներն իրար ասացին.

- Աստված պատժում է մեզ Հովսեփի համար: Հովսեփը հասկացավ նրանց միտքը և ինքն իրեն մտածեց.

- Գուցե նրանք զղջում են իրենց արածի համար, որ տարիներ առաջ գործել էին իմ դեմ:

Հովսեփը պատվիրեց, որ իր ծառաները եղբայրների պարկերը լցնեն ցորենով և մեջը դնեն այն դրամը, որ եղբայրները վճարել էին ցորենը գնելու համար:

Տուն հասնելուց հետո նրանք ամեն բան պատմեցին իրենց հորը և ասացին.

- Մենք պետք է Բենիամինին տանենք մեզ հետ, երբ նորից գնանք հաց գնելու: Այդ եգիպտացի պաշտոնյան ասաց, որ Բենիամինին մեզ հետ տանելու պայմանով ազատ կարձակի Սիմեոնին, և մենք կկարողանանք ազատ առևտուր անել Եգիպտոսում:

Մեծ անակնկալ եղավ եղբայրների համար, երբ նրանք բացեցին ցորենի պարկերը: Յուրաքանչյուրն իր պարկի մեջ զարմանքով գտավ իր փողի քսակը:

*Պատմության նկարները դասավորի՛ր հաջորդական կարգով: Յուրաքանչյուր նկարը գծով միացրո՛ւ իր ճիշտ համարին:*



**Հովսեփը վերադարձրեց նրանց գումարը:**









**Հովսեփը ցորեն վաճառեց նրանց:**



**Նրանք եկան հացահատիկ գնելու:**









**Հովսեփը նրանց բանտարկեց:**

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Հիսուսը սովորեցնում է մեզ կարեկից լինել

*Մատթեոս 25.34-40*

Հիսուսը խոսեց իր հետևորդների հետ և ասաց. «Դուք օրհնված եք Իմ Հոր կողմից: Դուք միշտ կլինեք իմ ընկերները, որովհետև դուք ինձ ուտելիք տվիք, երբ ես քաղցած էի, և խմելու ջուր տվիք, երբ ծարավ էի»:

Ընկերները հարցրեցին. «Տե՛ր, ե՞րբ պատահեց, որ քեզ քաղցած տեսանք և կերակրեցինք, կամ ծարավ՝ և ջուր տվեցինք»:

Հիսուսը պատասխանեց.




*Նկարի՛ր մի պատկեր, երբ ուտելիքդ կիսել ես որևէ մեկի հետ:*

# ՄԵԾ ՊԱՀՔԸ ԺԱՄԱՆԱԿ Է ՀԻՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեծ Պահքի ընթացքում Եկեղեցին օգնում է մեզ հիշելու Հիսուսի պատգամները և օգնելու ուտելիք չունեցող մարդկանց: Մեզանից պահանջվում է պարզ կերակուրներ ուտել: Մեր խնայած դրամով շոկոլադ կամ քաղցրավենիք գնելու փոխարեն կարող ենք ուտելիք գնել կարիքավորների համար:

> **Հոգևոր Բառարան**
>
> **Պահք՝**
>
> ժամանակ՝ Հիսուսին ավելի նմանվելու համար:

Ահա որոշ այլ բաներ, որ կարող ենք անել օգնելու նրանց, ովքեր բավարար ուտելիք չունեն:

*Լրացրո՛ւ նախադասությունները ցանկագրված բառերով: Նշի՛ր այն նկարը, որը ցույց կտա, թե դու ինչ կանեիր:*

հարևանիդ    հողամասում    ուտելիքը    անձրևոտ



Մի՛ թափիր _ _ _ _ _ _ _ :



Աղոթի՛ր _ _ _ _ _ _ _ և արևոտ եղանակի համար, որպեսզի բերքն առատ լինի:



Մայրիկի պատրաստած համով ուտելիքներից տո՛ւր _ _ _ _ _ _ _ _ :



Օգնի՛ր հարևանիդ՝ աշխատելով նրա _ _ _ _ _ _ _ _ _ :

# ԵԿԵՂԵՑԻՆ ԱՂՈԹՈՒՄ Է ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քահանան գնում է դաշտեր ու այգիներ և օրհնում արտերը, որտեղ աճում է մեր սնունդը: Կարդա՛ աղոթքն ուսուցչի օգնությամբ:



«Օրհնի՛ր, Տե՛ր, երկնքի  , որպեսզի նրանք

քաղցրաջուր  ցողեն մեր դաշտերին:

Օրհնի՛ր, Տե՛ր, մեր արտերը և պաշտպանի՛ր ամեն

տեսակի վնասից, քանի որ մեր  աճում են այնտեղ:

Օրհնի՛ր, Տե՛ր, մեր  և նրանց  , որպեսզի

նրանք առատ բերք հավաքեն առողջությամբ

և երջանկությամբ»:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Ծննդոց 42-րդ գլխից քաղված այս պատմությունը Հովսեփի հետ Հակոբի մյուս որդիների հանդիպման մասին հնարավորություն է տալիս մեր աշակերտներին տեսնել ընտանիքի անդամների համագործակցությունը: Բացի նրանից, որ այս պատմության մեջ շատ դրամատիկ պահեր կան, որոնք գրավում են վեցամյա երեխաների ուշադրությունը, ամենակարևորն այն է, որ նրանում ներկայացված է նաև ընտանիքի անդամների կարեկից լինելու և միմյանց հասնելու հրաշալի օրինակը, ինչպես նաև օտարացած հարազատների զղջումն ու ներողամտությունը: Զղջումն ու կարեկցանքը, անկասկած, վեց տարեկանների մեջ կներարկեն ու կզարգացնեն ներողամտության ու հոգատարության ոգին՝ հանդեպ իրենց ընտանիքի անդամները:

Մեր Տիրոջ ուսուցումները միմյանց հոգ տանելու և մեր ունեցածը կիսելու մասին ներկայացնում են այս դասի հայեցակետը: Երեխաները սովորեցին ընտրել, թե ինչպես ապրել հոգալու և կիսելու վերաբերյալ Հիսուսի պատգամները: Նրանց ծանոթացվեց այն գաղափարը, որ Մեծ Պահքը մի ժամանակահատված է, երբ Եկեղեցին հիշեցնում է մեզ մեծացնել մեր ջանքերը աստվածային այս պատվիրանները կյանքի կոչելու համար: Ձեր երեխայի հետ ընտրե՛ք կատարել հետևյալ առաջարկներից մի քանիսը՝ իբրև դասի լրացուցիչ ամրապնդում:

1. Թող երեխան վերապատմի Հովսեփի և նրա եղբայրների պատմությունը: Բացե՛ք Աստվածաշնչի Ծննդոց 42-րդ գլուխը, և թող ձեր օգնությամբ նա գտնի Հովսեփի անունը և տասը եղբայրներին վերաբերող հատվածը:
2. Արտագրե՛ք Հիսուսի պատգամները Մատթեոս 25.40 համարում, որը վերաշարադրված է այս դասի Կյանքը Եկեղեցում ենթաբաժնում: Թող ձեր երեխան գծագրի և գունավորի մի զարդարուն շրջանակ ձեր արտագրած թղթի վրա և այն փակցրե՛ք լավ տեսանելի տեղում:
3. Սովորություն դարձրե՛ք և ձեր երեխային սովորեցրե՛ք պահպանելու բարեգործություն անելու առաքինությունն ամբողջ տարի՝ մասնավորապես Մեծ Պահքի ընթացքում: Արժեքավոր փորձառություն կլինի նաև իրենց ունեցածն ավելի նվազ ունեցողների հետ կիսելը, որի համար մեծ ջանքեր չեն պահանջվի:
4. Նրանց մեջ զարգացրե՛ք իրազեկությունը հողագործների աշխատանքի կարևորության մասին, ովքեր ապահովում են բոլորի ուտելիքը: Նրանց և նրանց աճեցրած բերքի համար աղոթելը հոգալու և կիսելու մեկ այլ եղանակ է նրանց հետ, ովքեր չունեն բավարար ուտելիք:

ԳԼՈՒԽ Ը

# ՀԱՇՏ ԼԻՆԵՆՔ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Ընտանիքի անդամները պետք է սովորեն հաշտ ու համերաշխ լինել միմյանց հետ: Երբ եղբայրներն ու քույրերը վիրավորել են իրար, պետք է պատրաստ լինեն իրար ներելու: Երբեմն երբ մեկը նախանձում է եղբորը կամ քրոջը, ծնողները հիշեցնում են, որ նրանց հավասար են սիրում: Ընտանիք լինել նշանակում է, որ մենք պատկանում ենք իրար, իսկ Աստծո ընտանիքում ընդգրկված ու սիրով ընդունված են բոլորը:



ԳԼՈՒԽ Ը

# Ինչպես լինենք ընտանիքում



## Ծնողների համար

Երեխաներին հարկավոր է դաստիարակել և ուղղություն ցույց տալ ընտանիքի անդամների հետ հարաբերություններում: Եղբայրների ու քույրերի միջև հաճախ ծագող մանկական վեճերի ու կռիվների հետևանքը պետք է անմիջապես վերացնել ներողամտությամբ: Եղբայրների արարքը ներող Հովսեփի պատմությունը լավ օրինակ է ներկայացնում: Եղբայրների ու քույրերի անհաշտ լինելը բնականորեն երեխաներին առաջնորդում է նախանձի կամ անապահով լինելու զգացումների: Անառակ որդու պատմությունը վստահություն է տալիս նրանց, որ ծնողները սիրում են իրենց բոլոր զավակներին անպայմանավոր սիրով: Իսկ հեթանոս Կոռնելիոսի դարձի պատմությունը ցույց է տալիս երեխաներին, որ Աստծո ընտանիքում հրավիրված են բոլորը, և Լիդիան նրանց քրիստոնեական հյուրասիրության օրինակ է ծառայում:

# ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՆԵՐՈՒՄ ԵՆ

**«ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ ԵՂԵ՛Ք ՔԱՂՑՐ, ԳԹԱԾ՝ ՆԵՐԵԼՈՎ ՄԻՄՅԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ԱՍՏՎԱԾ ՆԵՐԵՑ ՄԵԶ ՔՐԻՍՏՈՍՈՎ»:**

**Եփեսացիներին 4.32**

## Հայտնագործենք

Երբեմն ընկերները վիրավորում են իրար: Գծով միացրո՛ւ յուրաքանչյուր երեխայի վիրավորանքը նկարագրող բառերը՝ դրանք պատկերող նկարներին:



*սուտ խոսել*

*ոտքը փայտով գցել*



Ես չեմ վերցրել քո փիկնիկը:

Հա՛, հա՛, տեսա՞ր ոնց ընկար:



*կապել վերքը*

*վերադարձնել փիկնիկը*



Ընկերոջը վիրավորող երեխան պետք է ներողություն խնդրի:

Իսկ ի՞նչ պետք է վիրավորված երեխան պատասխանի. «Ն __ ր __ մ եմ քե __ :

զ ու ե

*Տե՛ս, թե ի՞նչ ասաց Հովսեփն իր եղբայրներին մեր Աստվածաշնչի մեր այսօրվա պատմության մեջ:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ
## ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՆԵՐՈՒՄ ԵՆ
### Ըստ Ծննդոց 43-45, 46.5-7



Հակոբի որդիները Եգիպտոս վերադարձան իրենց ամենափոքր եղբոր հետ՝ ցորեն գնելու համար: Հովսեփը լավ ընդունեց նրանց փարավոնի պալատում և ընթրիքի հրավիրեց: Հովսեփը հարցրեց.

- Ինչպե՞ս է ձեր հայրը, ո՞ղջ է: Եղբայրները հարգանքով գլուխները խոնարհեցին և ասացին.

- Այո՛, մեր հայրը ողջ ու առողջ է: Նայելով Բենիամինին Հովսեփը հարցրեց.

- Սա՞ է ձեր ամենափոքր եղբայրը:

- Տե՛ր իմ, նա մեր հոր ամենափոքր փղան է: Եթե նրան մի բան պատահի, մեր հայրը կմահանա, որովհետև տարիներ առաջ նա կորցրեց մեկ այլ որդու՝ Հովսեփին՝ մեր կրտսեր եղբորը: Կարծում է, թե գազաններն են հոշոտել նրան:



Հովսեփն այլևս չկարողացավ զսպել իր հուզմունքը: Երբ մենակ մնացին, ասաց նրանց.

- Մո՛տ եկեք ինձ, խնդրում եմ, և լսե՛ք: Ես եմ ձեր եղբայրը՝ Հովսեփը, որին դուք տարիներ առաջ վաճառեցիք եգիպտացի առևտրականներին:

Եղբայրները ցնցված էին: Նրանք հիշեցին, թե ինչպե՛ս նախանձեցին

իրենց եղբորը՝ Հովսեփին, և նրան սփրուկի փեղ ծախեցին եգիպփացի վաճառականներին: Նրանք շափ զղջացին իրենց արածի համար: Ապա Հովսեփը շարունակեց.

- Այդքան մի՛ փխրեք և մի՛ մեղադրեք ինքներդ ձեզ՝ ինձ եգիպփացիներին վաճառելու համար: Ձեր գործած սխալը Ասփված փոխեց լավի: Տեսե՛ք, ես այժմ կարող եմ օգնել իմ ընփանիքին:





Եղբայրները երջանիկ գրկախառնվեցին, համբուրեցին իրար և միմյանց ասացին.

- Խնդրո՛ւմ եմ, ների՛ր ինձ, քո դեմ գործած սխալի համար: Իսկ Հովսեփն ասաց.

- Ես ներո՛ւմ եմ ձեզ, իմ՛ եղբայրներ:

Հովսեփն իր ամբողջ ընփանիքին հրավիրեց Եգիպփոսում ապրելու: Եղբայրները վերադարձան և բերեցին իրենց հորը, կանանց ու երեխաներին և հասփափվեցին Եգիպփոսում:

**ներում** **զղջացին**

Հովսեփի եղբայրները __ __ __ __ __ __ __ իրենց եղբոր դեմ գործածի համար:

Հովսեփն ասաց. «Ես __ __ __ __ __ եմ ձեզ՝ իմ՛ եղբայրներ»:

# Կ ՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Հիսուսը սովորեցնում է մեզ ներել



Հիսուսը խոսեց Իր աշակերտների հետ միմյանց հետ հաշտ լինելու մասին: Նա ասաց.

- Ուշադի՛ր եղեք, որ սխալ բան չանեք: Բայց եթե իմ հետևորդներից մեկը սխալ գործի և վիրավորի ձեզ, խոսե՛ք նրա հետ և փորձե՛ք հարթել խնդիրը:

Պետրոսը հարցրեց Հիսուսին.

- Տե՛ր, քանի՞ անգամ պիտի ներեմ եղբորս իմ դեմ գործած սխալի համար: Յոթ անգամը բավարա՞ր է: Հիսուսը պատասխանեց.

- Ոչ թե յոթ անգամ, այլ յոթանասունյոթ անգամ և ավելին:

*Նկարի՛ր մի պատկեր, երբ դու ներել ես եղբորդ կամ քրոջդ քո դեմ գործած սխալ արարքի համար:*

**Հոգևոր Բառարան**

**Ն ե ր ե լ՝**

դադարել զայրանալ մեկի վրա:

*Շրջագծի՛ր երկու բառեր, որոնք կնկարագրեն քո զգացողությունը ներելուց հետո:*

*չղայն* *ուրախ* *փխուր* *երջանիկ*

## ՀԻՇԵՆՔ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տերունական աղոթքն արտասանելիս մենք հիշում ենք Հիսուսի խոսքերը միմյանց ներելու մասին:

«Հա՛յր մեր, որ երկնքում ես,
սո՛ւրբ թող լինի Քո անունը,
Քո արքայությունը թող գա,
Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է:
Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր,

և **նեի՛ր մեզ** մեր մեղքերը,

ինչպես որ **մենք ենք ներում** նրանց,

ովքեր մեղք են գործել մեր դեմ:
Եվ մի՛ տանիր մեզ փորձության,
այլ փրկի՛ր մեզ չարից.
Ամեն»:

*Ներկի՛ր վերևի գծագիր բառերը հետևյալ գույներով.*

<u>ների՛ր մեզ</u>՝ կարմիր, <u>մենք ենք</u>՝ կանաչ, <u>ներում</u>՝ կապույտ:

*Նկարը գծով միացրո՛ւ ճիշտ կապակցությանը՝ նախադասությունը լրացնելու համար:*

*Ես սխալ եմ գործել, ...*

*Դու վիրավորել ես ինձ: Ես ....*



ների՛ր ինձ:

ներում եմ քեզ:



# ԽԱՂԱՂ ԱՊՐԵՆՔ ՄԻԱՍԻՆ

*Գտի՛ր տառերը, որոնք համընկնում են բաց թողնված գծերի գույներով, և լրացրու՛ բառերը: Ապա կարդա՛ աղոթքն ուսուցչի հետ: Այն արտասանի՛ր ամեն օր՝ առավոտյան և երեկոյան:*

Որքա՛ն լավ է, երբ հ__ րազ __ տներն

ու ընկ __ րն __ րը խ __ ղ __ ղ ապրում __ ն

մ __ աս__ ն:

ե ի ա

## Տանը՝ ընտանիքի հետ

Այս դասը չորսից առաջինն է, որ նվիրված է ընտանեկան հարաբերություններին: Ընտանիքի անդամների հաշտ ու համերաշխ լինելով է պայմանավորված համայնքի և ընդհանրապես հասարակության անդամների խաղաղ համակեցությունը, որը մեծ հաշվով նպաստում է աշխարհի խաղաղությանը:

Այսօրվա սուրբգրային պատմության մեջ Հովսեփը ներում է իր եղբայրներին՝ փարիներ առաջ իրեն եգիպտացի վաճառականներին ծախելու համար: Պատմությանն անմիջապես հաջորդում է սովի ժամանակ Հովսեփի՝ իր եղբայրներին հացահատիկ վաճառելու դրվագը՝ առանց ճանաչվելու նրանց կողմից: Պատմության մեջ Հովսեփը հուզվում է և ներում իր եղբայրներին: Պատմությունն ավարտվում է ներելու և ներում խնդրելու գեղեցիկ օրինակով:

Դասը նաև բովանդակում է ներողամտության մասին Հիսուս Քրիստոսի ուսուցումները Մատթեոս 18.21-22 հատվածում: Երեխաներին առիթ է տրվում նկարելու միջոցով անդրադառնալ ներելու իրենց փորձառություններին, ապա մտածելու Տերունական աղոթքի հետևյալ խոսքերին. «Ների՛ր մեզ մեր մեղքերը, ինչպես որ մենք ենք ներում նրանց, ովքեր մեղք են գործել մեր դեմ»: Սաղմոս 132.1 տողը երեխաների մեջ ներարկում է միասին խաղաղ ապրելու դրական գաղափարը:

Ձեր երեխայի հետ ընտրե՛ք կատարել ներքոնշյալ առաջարկները՝ ներողամտության ոգին զորացնելու համար:

1. Թող նա նկարի Հովսեփի՝ իր եղբայրներին ներելու պատմությունը և այն պատմի իր սեփական բառերով:
2. Աստվածաշնչում բացե՛ք Մատթեոս 18.21-22 հատվածը և այն միասին կարդացե՛ք:
3. Արտասանե՛ք Տերունական աղոթքը միասին դանդաղ, որպեսզի երեխան ուշադրություն դարձնի «Ների՛ր մեզ մեր մեղքերը, ինչպես որ մենք ենք ներում նրանց, ովքեր մեղք են գործել մեր դեմ» տողերին:
4. Մեծ տառերով թղթի վրա գրե՛ք Սաղմոս 132.1 տողը: Թող ձեր մանուկը նկարի զարդարուն շրջանակ և այն հաճախ ցուցադրե՛ք լավ երևացող տեղում:
5. Գծե՛ք երկու սյունակ: Մի սյունակին գրե՛ք «Ես ներեցի», իսկ մյուսին՝ «Ես ներողություն խնդրեցի»: Գրանցե՛ք ամեն անգամ, երբ ընտանիքի որևէ անդամ ների կամ ներում խնդրի: Որպես ընտանիք տեսե՛ք, թե ինչքան խաղաղ ու երջանիկ են բոլորը, երբ ներում են:

ԴԱՍ 28

# ԱՎԱԳ ԵՂԲՈՐ ՆԱԽԱՆՁԸ

**«ՈՐԴՅԱ՛Կ, ԴՈՒ ՄԻՇՏ ԻՆՁ ՀԵՏ ԵՍ, ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉ, ՈՐ ԻՄՆ Է, ՔՈՆՆ Է»:**

Ըստ Ղուկասի 15.31

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

*Նայի՛ր նկարին և պատմի՛ր, թե ի՞նչ է տեղի ունենում: Ո՞ր բառերը կնկարագրեն ավագ եղբոր զգացողությունը: Այսպիսի ✓ նշան դի՛ր քո ընտրած բառերի դիմացը:*



__ջղային __հուզված __ուրախ __նախանձ __տխուր __անտեսված

Արդյոք եղե՞լ է ժամանակ, երբ դու էլ նույնն ես զգացել, ինչ նկարի երեխան:

*Ներքևում նկարի՛ր դա ցույց տալու համար:*

*Աստվածաշնչի մեր այսօրվա պատմության մեջ տե՛ս, թե ո՞վ էր նախանձում:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## Ավագ եղբոր նախանձը

### Ըստ Ղուկ. 15.11-32



Հիսուսը հետևյալ պատմությունը պատմեց իր ընկերներին: Մի հարուստ մարդու կրտսեր որդին ասաց հորը. «Տո՛ւր ինձ իմ հասանելիք բաժինը, ուզում եմ տնից գնալ»: Նա գնաց հեռու երկիր ապրելու: Ամեն օր քեֆ էր անում և անխնա ծախսում հոր փված փողերը: Երբ գրպանի դրամը վերջացավ, ընկերները լքեցին նրան:



Նա այլևս ուտելու բան չուներ: Գնաց ու խոզարածի աշխատանք գտավ: Նա այնքան կցանկանար ուտել խոզերի կերը, բայց նրան դա էլ թույլ չէին տալիս:





Ի վերջո նա որոշեց վերադառնալ իր հոր մոտ և ներում խնդրել: Անգամ համաձայն կլիներ դառնալ նրա ծառաներից մեկը: Հեռվից հայրը տեսավ նրա վերադարձը: Նա խղճաց իր որդուն: Հայրը դուրս վազեց, գրկեց ու համբուրեց նրան: Որդին զղջալով ասաց. «Հայրի՛կ, ես մեղք եմ գործել Աստծո առաջ և քո առաջ: Ես արժանի չեմ կոչվելու քո որդին: Ընդունի՛ր ինձ իբրև քո ծառաներից մեկը»:



Բայց հայրը պատվիրեց իր ծառաներին, որ բերեն իր որդու լավ զգեստները և մեծ խնջույք պատրաստեն:

Օ՜, որքա՛ն նախանձեց մեծ եղբայրը՝ իմանալով եղբոր պատվին տրվող խնջույքի մասին: Նա նույնիսկ տուն չէր մտնի, եթե անգամ հայրը դուրս գալով աղաչեր:

Հայրի՛կ, ես զայրացած եմ, քանի որ դու ինձ երբեք ոչ մի բան չես տվել ընկերներիս հետ զվարճանալու համար: Բայց դու խընջույք ես պատրաստել քո փղայի համար, ով մսխեց քո փողերը, որովհետև պարզապես վերադարձե՛լ է:



Հայրը ձեռքը դրեց ավագ որդու ուսին և ասաց.

- Որդի՛ս, դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ, որ ունեմ, քոնն է: Բայց հիմա պետք է ուրախանանք և տոնենք, որովհետև քո եղբայրը կորած էր և գտնվեց, մեռած էր և հիմա ողջ է:

*Գրի՛ր և ներկի՛ր այն բառերը, որ կնկարագրեն, թե ավագ որդին ինչպե՛ս իրեն զգաց, երբ հայրը ձեռքը դրեց նրա ուսին և խոսեց նրա հետ:*

ՏԽՈՒՐ ԲԱՐԿԱՑԱԾ

ՍԻՐՎԱԾ ԵՐՋԱՆԻԿ

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Երբ նախանձում եմ, Աստված օգնում է ինձ

Աստված գիտի, որ երբ նախանձում ենք, շատ ենք տխրում: Դրա համար Աստված սովորեցնում է մեզ չնախանձել մեկս մյուսին: Տերն ասում է.

***«Մի՛ նախանձիր քո եղբորը, քո քրոջը կամ քո ընկերոջը: Փոխարենը սիրի՛ր նրանց այնքան, ինչքան Աստված է սիրում քեզ»:***

Հմմտ. Ելք 20.17 և Հովհաննես 14.21

*Ձախ կողմի նկարները ցույց են տալիս մի պահ, երբ թերևս դու նախանձ ես զգացել: Յուրաքանչյուր նկարը գծով միացրո՛ւ աջ կողմի նկարներից մեկին, որը կօգնի քեզ նախանձելու փոխարեն սիրել:*








## Սե՛ր ցուցաբերենք



Հիսուսն ասում է, թե ինչո՛ւ մենք չպետք է նախանձենք, այլ սիրենք մեկս մյուսին: Ահա, թե Տերն ինչ ասաց.

*«Սիրեցե՛ք բոլորին, նույնիսկ նրանց, ովքեր լավ չեն վարվում ձեզ հետ, որպեսզի զավակները լինեք ձեր Հոր, որ երկնքում է:*

*Աստված արեգակը ծագեցնում է բարի և չար մարդկանց վրա: Որպեսզի միշտ լինեք ձեր երկնավոր Հոր նման»:*

Մատթեոս 5.44-47

«Ուրա՛խ եղիր, այսպես է ասում Տեր Աստվածը:

Ես եմ Տերը, որ ստեղծեցի քեզ ____________:

Ես քո անունով կանչեցի քեզ, քանի որ իմն ես:

Ես եմ քո Աստվածը: Դու թանկ ես ինձ համար և

**Ես սիրում եմ քեզ:**

Հմմտ. Եսայի 43.1-4

Ես ասում է Աստծուն.

«Շնորհակալ եմ ինձ ս __ ր __ լու համար»:

ե   ի

**Հոգևոր Բառարան**

**Սեր՝**

Աստված ցույց է տալիս իր սերը՝ հոգ տանելով մեր մասին և պաշտպանելով մեզ:

# Երգենք Աստծուն

*Մեր անուն Հիսուս,*
*Քո սիրով ճմլիր իմ քարեղեն սիրտը:*




## Տանը՝ ընտանիքի հետ

Նախանձը մարդկային զգացում է, որ սովորաբար ունենում են թե՛ փոքրերը, թե՛ մեծերը: Մանկության ընթացքում պատշաճ վարվելու դեպքում նախանձն այլևս չի դառնա կախվածություն առաջացնող զգացմունք: Անառակ որդու մասին այսօրվա պատմության հայեցակետն ամենևին էլ կրտսեր եղբայրը չէ, ով թողեց հայրական տունը և վատնեց հոր ունեցվածքը, այլ ավագ եղբայրը, ով ջանասիրաբար աշխատում էր հոր հետ տանը: Տիրոջ պատմած այս առակը ցույց է տալիս մեզ, որ ավագ որդին այրվում է նախանձի ծանր զգացումից, երբ հայրը սիրով է ընդունում տուն վերադարձած կրտսեր որդուն: Նախանձը ծնվում է անվստահելիության զգացումից, սիրված չլինելու վախից: Առակում հոր պատասխանը ցույց է տալիս, թե ինչպե՛ս է վերաբերվում իր ավագ որդուն՝ հավաստիացնելով, որ նա միշտ սիրված է եղել և պիտի շարունակվի սիրված մնալ:

Որպես ծնողներ մենք կարող ենք մեր զավակներին մատուցել վստահության այդ նույն զգացումը, որը բխում է սիրված լինելուց, ինչպես նրանք ապրում են՝ առանց դրան սպասելու: Առակում ներկայացված հոր նման, որ իր սիրո համար պայման չնկատեց ճիշտ պահվածքը, իբրև ծնողներ մենք կոչված ենք չպայմանավորել մեր սերը երեխաների հանդեպ նրանց ճիշտ պահվածքով, այլ համբերատար ու սիրալիր առաջնորդել նրանց ցանկալի պահվածքի:

Ահա որոշ օգտակար խորհուրդներ տանը կատարելու համար.

1. Թող ձեր երեխան բեմականացնի կամ դերակատարի պատմությունն իր եղբայրների կամ ընկերների հետ:
2. Դերախաղից հետո քաջալերե՛ք նրանց արտահայտվել, թե ի՞նչ զգացին դերերը խաղալիս: Հարցրե՛ք, եթե երբևէ իրենց զգացել էին ավագ որդու պես նախանձոտ կամ անտեսված: Առանց նախատելու զրուցե՛ք նրանց հետ այդպիսի դրսևորումների շուրջ:
3. Գրկախառնումով ու սիրառատ խոսքերով հավաստիացրե՛ք ձեր երեխային, որ նրան սիրում եք անպայմանավոր սիրով:
4. Ձեր երեխայի հետ գրե՛ք Եսայի 43. 1-4 տողերը ձևավոր կերպով առանձին թղթի վրա և այն տեղադրե՛ք լավ տեսնելի մի տեղում. «*Ես եմ Տեր Աստվածը, որ քեզ անունով եմ կոչում: Դու իմն ես: Ես սիրում եմ քեզ*»: Հաճախակի ընթերցե՛ք այն ձեր երեխայի հետ:

ԴԱՍ 29

# ԱՍՏԾՈ ԸՆՏԱՆԻՔՆ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է ԲՈԼՈՐԻՆ

«ԴՈՒՔ ԲՈԼՈՐԴ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՈՒ ՔՈՒՅՐԵՐ ԵՔ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՈՎ»:

Հմմտ. Գաղատացիներին 3.28

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Իմ ընտանիքը սերում է Հայաստանի տարբեր վայրերից: Մենք մի մեծ ընտանիք ենք:

*Յուրաքանչյուր տարազով մարդուն գծով միացրո՛ւ իր բնակավայրի հետ՝ օգտագործելով գունային հուշումները:*



մայրիկը



հայրիկն ու քեռին

Սվազ

Ադանա

Երևան



պապիկն ու տատիկը

զարմիկներս ու ես

*Պարզի՛ր, թե ինչպիսի՞ն են մյուսների ընտանիքները, ովքեր եկել են տարբեր տեղերից:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ
## Աստծո ընտանիքն ընդգրկում է բոլորին

### Ըստ Գործք առաքելոց 10



Երուսաղեմից հեռու գտնվող մի քաղաքում էր ապրում հեթանոս Կոռնելիոսն իր ընտանիքի հետ: Նրանք սիրում էին Աստծուն: Օգնում էին աղքատներին և միշտ աղոթում ու փառք էին տալիս Աստծուն: Տիրոջ հրեշտակը հայտնվեց նրան և ասաց.

-Կոռնելիո՛ս, Աստված լսեց քո աղոթքները: Հիմա քո մարդկանցից մի քանիսին ուղարկի՛ր Հոպպե քաղաք, որպեսզի գտնեն Պետրոս անունով մի մարդու և բերեն քեզ մոտ:

Պետրոսը գտնվում էր Հոպպեում և աղոթք էր անում իր ընկերոջ՝ Սիմոնի տան տանիքում: Մինչ սպասում էր, որ իրեն ուտելիք տային, հանկարծ մի տեսիլք տեսավ: Քառանկյուն սկուտեղի նման մի մեծ սփռոց իջավ երկնքից: Նրա վրա կային աշխարհի բոլոր կենդանիները, նաև թռչուններն ու սողունները: Հանկարծ մի ձայն եկավ Պետրոսին և ասաց.

- Պետրո՛ս, վերցրո՛ւ կենդանիներին, եփի՛ր ու կե՛ր: Պետրոսը պատասխանեց.

- Ո՛չ, Տե՛ր իմ, իմ ընտանիքը չի ուտում այս կենդանիներից ոչ մեկին:

Ձայնը կրկին հնչեց.

- Պետրո՛ս, այն, ինչ Աստված տալիս է քեզ, պետք է ուտես:

Հենց այդ պահին Կոռնելիոսի մարդիկ եկան փնտրելու Պետրոսին: Աստված ասաց Պետրոսին, որ գնա այդ մարդկանց հետ: Երբ միասին մտան Կոռնելիոսի տուն, նրանք ընտանիքով հյուրընկալեցին Պետրոսին: Պետրոսն ասաց.

- Դու գիտես, որ ես հրեա եմ, և օրենքն ինձ թույլ չի տալիս այցելել կամ գործակցել ոչ-հրեա մարդկանց հետ: Բայց Աստված ինձ ցույց տվեց, որ ես պետք է ընդունեմ բոլորին: Հիմա ասա՛, թե ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ համար:

Կոռնելիոսն ասաց.

- Հրեշտակն ասաց, որ քո ետևից մարդ ուղարկեմ: Հիմա մենք պատրաստ ենք լսելու այն ամենը, ինչ Աստված պատվիրել է քեզ ասել մեզ:

Պետրոսն ասաց.

- Ես տեսնում եմ, որ Աստված արտոնյալ սիրելիներ չունի: Տերն ընդունում է բոլոր նրանց, ովքեր սիրում են Աստծուն և արդար են վարվում: Ուրեմն, թո՛ւյլ տվեք, որ ձեզ պատմեմ Հիսուս Քրիստոսի մասին, ով քարոզում էր ամբողջ Հրեաստանում: Հիսուսը ծնվել էր Բեթղեհեմում և մկրտվել Հովհաննեսի կողմից: Նա օգնում էր մարդկանց, բուժում հիվանդներին ու հույս և ուրախություն բերում ամենքին: Որոշ մարդիկ, ովքեր չէին սիրում Հիսուսին, Նրան խաչեցին: Նա մահացավ, սակայն երեք օր հետո հարություն առավ մահացածներից: Սիրելի ընկերներ, նա, ով հավատում է Հիսուս Քրիստոսին, նրա բոլոր մեղքերը կներվեն:



Հանկարծակի Սուրբ Հոգին իջավ բոլոր նրանց լսողների վրա: Պետրոսի հրեա ընկերները զարմացել էին, որ Սուրբ Հոգին իջավ Կոռնելիոսի և նրա ընտանիքի վրա, որոնք հրեաներ չէին: Նրանք ականատես եղան և լսեցին, որ այդ մարդիկ ևս փառաբանում են Աստծուն: Ապա Պետրոսն ասաց.

- Այս մարդիկ մեզ նման Սուրբ Հոգի ստացան: Ինչպե՞ս կարող ենք նրանց չմկրտել: Ջո՛ւր բերեք այստեղ:

Եվ Պետրոսը պատվիրեց, որ նրանք մկրտվեն Հիսուս Քրիստոսի անունով:

**Հոգևոր Բառարան**

**Կոռնելիոս՝**

հեթանոս, այսինքն՝ ոչ-հրեա, որին Պետրոսը մկրտեց, որպեսզի հետևի Հիսուս Քրիստոսին:

## ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

### Եղբայրներ ու քույրեր Քրիստոսով

Ընտանիքի անդամները նույնը չեն: Մենք ունենք հարևաններ, որոնք տարբերվում են մեզանից: Մենք գուցե նույն ազգից էլ չենք: Ինչպե՞ս պետք է վերաբերվենք նրանց:

Սուրբ Պողոսը հետևյալն է հորդորում քրիստոնյաներին.

***«Երբ մկրտվում եք Հիսուս Քրիստոսի անունով, դառնում եք Աստծո զավակներ: Տարբերություն չկա՝ հույն ես, թե հրեա, տղամարդ ես, թե կին. դուք բոլորդ եղբայրներ ու քույրեր եք Քրիստոս Հիսուսով»:***

Հմմտ. Գաղատացիներին 3.27-28





## Գայանեն ընկերուհիների հետ Հռոմից գալիս է Հայաստան

Մի խումբ քրիստոնյա կանայք, որոնք ապրում էին Հռոմում, հալածվում էին թագավորի կողմից, քանի որ վերջինս չէր սիրում քրիստոնյաներին: Գայանեն՝ նրանց առաջնորդը, լսում է, որ Հայաստանում քրիստոնյաներ կան: Նրանք գալիս են Հայաստան և գտնում իրենց նման մի խումբ հայ քրիստոնյա կանանց, ովքեր գրկաբաց ընդունում են նրանց: Գայանեն և իր ընկերուհիներն ապրում և աշխատում էին քրիստոնյա հայուհիների հետ Հռգյաց վանքում: Չնայած նրանք հայեր չէին, բայց և հայուհիները նրանց քրոջ պես էին ընդունում, քանի որ բոլորն էլ սիրում և հետևում էին Հիսուս Քրիստոսին:

Աղ __ թ __ մ էին միասին:

Պ __ տմ __ մ էին մարդկանց Հիսուսի մասին:

__ գն __ մ էին կարի - քավորներին:

__ րգ __ մ էին հոգևոր երգեր:

*Օգտվելով բառացանկից՝ լրացրո՛ւ բաց թողնված տառերը և գրի՛ր այն բառերը, որոնք նկարագրեն, թե ինչո՞վ էին զբաղվում հռոմեացի և հայուհի քրիստոնյաները միասին:*

1. Աղոթում
2. Երգում
3. Պատմում
4. Օգնում

# ՇԱՏ ՄԱՐԴԻԿ՝ ՄԵԿ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Եկեղեցին կազմված է տարբեր մարդկանցից: Շատ գույներ կազմում են գեղեցիկ պատկեր: Օգտագործի՛ր գունային հուշումները՝ նկարը գունավորելու համար: Ի՞նչ ես տեսնում:







## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Գաղատացիների եկեղեցուն ուղղված Սբ. Պողոս առաքյալի խոսքերը նախանշում են այս դասի նպատակը, որի համաձայն եկեղեցու ընտանիքը կազմված է տարբեր տեսակի մարդկանցից: Այդուհանդերձ նրանք բոլորը մի են և նույնն Աստծո աչքում, որովհետև նրանք Իր ընտանիքի անդամներն են:

Սուրբգրային պատմությունը ներկայացրեց Կոռնելիոսին, ով քրիստոնյա դարձած առաջին հեթանոսն էր: Պետրոս առաքյալն արձագանքում է Քրիստոսի կոչին. *«Գնացե՛ք, այսուհետև, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, մկրտեցե՛ք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով...»* (Մատթ. 28. 19), երբ ասաց Կոռնելիոսի տանը հավաքվածներին. «Ճշմարտությամբ վերահասու եմ եղել, որ Աստծո կողմից աչառություն չկա, այլ՝ բոլոր ազգերի մեջ ով երկնչում է նրանից և արդարություն գործում, ընդունելի է նրան» (Գործք. 10. 34-35):

Քրիստոնեական չափանիշներով՝ նրանք, ովքեր մկրտվում են Սուրբ Երրորդության անունով, դառնում են իրար եղբայրներ ու քույրեր՝ անկախ ազգային կամ էթնիկ պատկանելության: Հակառակն ուսուցանելը կնշանակեր ժխտել Աստծո խոսքը:

Մեր երեխաները պետք է սովորեն սիրալիր կերպով ընդունել միմյանց հատկապես, երբ նրանք անդամ են դառնում Քրիստոսի խորհրդավոր մարմնի՝ Սուրբ Եկեղեցու: Կյանքը Եկեղեցում բաժնում երեխաներին ուսուցանվում է, որ մկրտության միջոցով նրանք բոլորը դառնում են միևնույն ընտանիքի անդամ: Ավելին՝ Սբ. Գայանեի և Սբ. Հռիփսիմեի և նրանց ընկերուհիների օրինակի միջոցով նրանց առիթ տրվեց փոքր-ինչ պատկերացում կազմելու Հայաստանի վաղ քրիստոնեական Եկեղեցու կյանքի մասին: Այդ հռոմեացի կույսերը ի սեր Հիսուս Քրիստոսի գտան իրենց խաղաղ հանգրվանը քրիստոնյա հայուհիների հետ ապրելով, քանի որ քարոզում էին Քրիստոսի Ավետարանը՝ դառնալով հայ ժողովրդի հավատի դարձի յուրահատուկ գործիքները:

Օգնի՛ր քո երեխային աճելու քրիստոնեական սիրո մեջ հանդեպ բոլորը, ովքեր իրենց մկրտության շնորհով խոստովանում են Տիրոջը: Ահա որոշ վարժություններ, որ կարող եք անել:

1. Սովորեցրե՛ք ձեր երեխաներին լավ տրամադրվել և սիրալիր ընդունել նրանց հանդիպող երեխաներին, ովքեր գուցե իրենց համայնքից չլինեն: Քաջալերե՛ք նրանց խաղալ շրջապատի բոլոր երեխաների հետ՝ առանց բացառության:
2. Կազմակերպե՛ք հատուկ այց կամ ուխտագնացություն դեպի Սբ. Հռիփսիմե և Սբ. Գայանե վանքերը և ձեր երեխաների հետ աղոթե՛ք և փա՛ռք տվեք Աստծուն՝ իբրև հրաշալի օրինակ նրանց քրիստոնեական սիրո:
3. Գրե՛ք հետևյալ տողը. «Մկրտությունը մեզ դարձնում է եղբայրներ ու քույրեր Քրիստոսով»: Թող ձեր զավակը գունազարդի այն և տեղադրե՛ք բոլորին լավ տեսանելի մի տեղում:
4. Ձեր շրջապատից գտե՛ք մի երեխայի, ով դեռ չի հաճախում Եկեղեցու կիրակնօրյա կամ մեկօրյա դպրոց: Թող ձեր երեխան նրան հրավիրի դպրոց՝ միասին սովորելու:

# ԼԻԴԻԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ Է ԱՍՏԾՈ ԸՆՏԱՆԻՔԻՆ

**«ՀՅՈՒՐԱՍԵՐ ԵՂԵՔ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՆԴԵՊ ԱՌԱՆՑ ՏՐՏՆՋԱԼՈՒ»:**
**Ա Պետրոս 4.9**

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Մեր ընտանիքը սիրում է հյուրեր ընդունել մեր տանը: Մայրս սկսում է պատրաստություն տեսնել հյուրերի համար: Նա նաև դիմում է մեր օգնությանը՝ տունը կարգի բերելու համար:

*Նայի՛ր նկարներին և համապատասխանեցրո՛ւ նկարագրող բառերը: Գրի՛ր ճիշտ թիվը յուրաքանչյուր շրջագծում:*





1. ծաղիկները դնել ծաղկամանի մեջ
2. ավլել
3. փոշիները վերցնել
4. խմորեղեն թխել

*Այժմ գունավորի՛ր ծաղիկներն ու թխվածքները: Ապա Աստվածաշնչի մեր այսօրվա պատմության մեջ փնտրի՛ր, թե էլ ո՞վ էր սիրում հյուրեր ընդունել:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## Լիդիան հյուրընկալում է Աստծո ընտանիքին

### Ըստ Գործք առաքելոց 16.1-15



Պողոս առաքյալն իր ընկերոջ՝ Տիմոթեոսի հետ շրջում էր քաղաքից քաղաք և մարդկանց պատմում Հիսուս Քրիստոսի մասին: Ամեն օր նոր մարդիկ էին հավատում Հիսուս Քրիստոսին: Նրանք միանում էին Եկեղեցուն՝ Աստծո ընտանիքին:

Դժվար էր ճամփորդել այդքան հեռու երկրներով: Բայց Պողոսը և Տիմոթեոսն ուզում էին, որ բոլորը լսեն Հիսուս Քրիստոսի՝ մեր Աստծո սիրո մասին: Նրանք ճամփորդում էին ցամաքով և նավարկում ծովով:

Մի օր նրանք նավակ նստեցին և որոշեցին գնալ Փիլիպպե անունով մեծ քաղաքը: Պողոսն ասաց իր երիտասարդ ընկերոջը.

- Տիմոթեո՛ս, արդեն շատ ենք հոգնել, արի՛ մի քանի օր հանգստանանք: Ապա կգնանք պետնելու մեր ընկերներին»:

Շաբաթ օրով նրանք գնացին գետափին մոտ գտնվող մի տեղ, ուր սովորությամբ ժողովուրդը գալիս էր աղոթքի: Այնտեղ էին եկել մի խումբ կանայք: Պողոսը և Տիմոթեոսը նստեցին նրանց կողքին և սկսեցին զրուցել նրանց հետ: Պողոսն ասաց.

- Քույրե՛ր, ես լավ լուր ունեմ ձեզ համար: Աստված ուղարկեց իր միակ որդուն՝ Հիսուս



Քրիստոսին, որպեսզի օգնի մեզ: Նա սովորեցրեց մեզ, թե ինչպե՛ս պետք է լինել Աստծո ընկերներ: Նա բուժեց հիվանդներին, օգնեց աղքատներին և ուսուցանեց ինչպես սիրել Աստծուն և միմյանց: Որոշ մարդիկ խաչեցին նրան: Նա մահացավ, բայց Աստված հարություն տվեց նրան:

Կանանց դուր եկավ պատմվածը, և ասացին.

- Ավելի՛ն պատմիր Հիսուսի մասին:

Պողոսը շարունակեց.

- Ով որ հավատում է Հիսուսին և սիրում Նրան, հավիտյան կլինի Աստծո ընկերը:



Պողոսի խոսքը լսող կանանցից մեկի անունը Լիդիա էր: Նա այդ մեծ քաղաքից էր, որտեղ էլ զգեստներ կարելու գեղեցիկ կտորներ էր վաճառում: Աստված օգնում է նրան, որպեսզի հավատա Պողոսի և Տիմոթեոսի խոսքերին: Լիդիան խնդրեց, որ մկրտվի: Ապա ասաց Պողոսին ու Տիմոթեոսին.

- Եթե համարում եք, որ ես հավատում եմ Տիրոջը, խնդրում եմ եկե՛ք և մնացե՛ք իմ տանը:

Լիդիան լավ ընդունեց և հյուրասիրեց նրանց իր տանը:

*Ներկի՛ր Լիդիայի տան հյուրասենյակը և գեղեցկացրո՛ւ հյուրերին ընդունելու համար:*

**Հոգևոր Բառարան**

**Հյուրընկալել՝**

երբ տանդ դռները բացում ես և բարի գալուստ մաղթելով ներս հրավիրում հյուրերին:



# Վ ՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Սուրբ Մակրինեն



Մակրինեն շատ ուրախ աղջիկ էր: Ուներ լավ ընտանիք, ովքեր սիրում էին հյուրեր ընդունել իրենց տանը: Մակրինեն Հիսուս Քրիստոսին սիրել սովորեց իր տատիկից, հայրիկից ու մայրիկից: Մակրինեի ծնողներն ունեին մի մեծ տուն: Իրենց տատիկի նման նրանք հյուրեր էին հրավիրում իրենց տուն և պատվում էին նրանց: Նրանք նաև աղքատներին էին բաժին հանում: Հոր մահից հետո Մակրինեն օգնում էր մորը՝ տունը կարգի բերելու համար: Մակրինեն հարգանքով էր վերաբերվում բոլորին: Նրանք վաճառում են իրենց թանկարժեք կահույքը և գումարը բաժանում աղքատներին: Նա իրենց տանը ծառայողներին վերաբերվում էր իր եղբայրների ու քույրերի պես: Նրանք բոլորը նստում էին սեղանի շուրջ և ճաշում միասին:

Մակրինեն և նրա մայրն իրենց տունը դարձրել էին մի վայր, որտեղ բոլորը հյուրասիրվում էին: Հյուրերի հետ նրանք ուտում էին, զրուցում, սովորում Հիսուս Քրիստոսի մասին և միշտ աղոթք անում:

Մակրինեն ինչպե՞ս էր դրսևորում իր սերը Հիսուսի նկատմամբ:

*Գունավոր յուրաքանչյուր նախադասության մեջ շրջագծի՛ր այն բառը, որը ցույց է տալիս, թե Մակրինեն ինչպե՞ս էր վերաբերվում իր հյուրերին և գրի՛ր դրանք ներքևի գծիկների վրա՝ ըստ համապատասխան գույների:*

**1.** _ _ _ _ _ _ _ _ _

**2.** _ _ _ _ _   _ _ _ _ _ _

**3.** _ _ _ _ _ _ _ _ _ _ _

## Մենք ընդունում ենք մյուսներին Աստծո ընտանիքում

*Նայի՛ր հյուրասեր լինելու մասին նկարներին: Յուրաքանչյուր զույգ նախադասություններից ընտրի՛ր լավ տարբերակը: Ընդգծի՛ր քո ընտրածը:*



❖ Ես չեմ ուզում, որ նա խաղա մեզ հետ:

❖ Եկե՛ք նրան ասենք, որ խաղա մեզ հետ:



❖ Տե՛ր Հայր, մենք չենք ճանաչում այս մարդկանց, արի՛ գնանք ուրիշ տուն:

❖ Տղա՛ս, արի՛ օրհնենք նրանց տունը և նրանց էլ եկեղեցի հրավիրենք:



❖ Ես չեմ սիրում այս տղային, արի՛ առանց նրա գնանք խաղալու:

❖ Արի՛ մեզ հետ գնանք եկեղեցու մեկօրյա դպրոց: Այնտեղ շատ լավ է, միասին կսովորենք:

## Մենք ողջունում ենք իրար սուրբ համբույրով



Հիսուսը հրավիրում է մեզ Իր հատուկ ճաշին՝ Սուրբ Պատարագին: Պատարագի ընթացքում մենք ողջունում ենք իրար սուրբ համբույրով:

*Քրիստոսը հայտնվեց մեր մեջ*

*Օրհնյալ է հայտնությունը Քրիստոսի*

*Ուսուցչի հետ սովորի՛ր սուրբ համբույրով փոխանցել ողջույնը:*

## Տանը՝ ընտանիքի հետ

Հյուրասեր լինել առաքինի հատկանիշ է, որ երեխաները հեշտ սովորում են իրենց ծնողներից: Հարազատներին կամ ընկերներին հյուրասիրելը լավ սովորություն է, որ բնորոշ է բոլոր մշակույթներին և պարտականություն է բոլոր քրիստոնյաների համար: Եբրայեցիներին ուղղված նամակում քրիստոնյաներին հորդորվում է հետևյալը. *«Մի՛ մոռացեք օտարասիրությունը (հյուրասիրությունը), որովհետև դրա շնորհիվ շատերը հրեշտակներ հյուրընկալեցին առանց իմանալու»* (Եբր. 13.2): Պետրոսի առաջին նամակի 4.9 համարում դարձյալ ասվում է. *«Հյուրասե՛ր եղեք միմյանց հանդեպ առանց տրտնջալու»:*

Լիդիայի դարձի կարճ պատմության մեջ երեխաները ծանոթացան մի կնոջ հետ, ով քրիստոնեական հյուրասիրություն ցուցաբերեց և օգնեց հոգևոր ծառայության մեջ գտնվող Պողոս առաքյալին: Դասն անդրադառնում է նաև վաղ եկեղեցական կյանքին Սբ. Մակրինեի՝ Սբ. Բարսեղ Կեսարացու և Սբ. Գրիգոր Նազիազանցու քրոջ վարքի միջոցով: Նրա ամբողջ կյանքը Քրիստոսի սիրուց ծնված հյուրասիրություն էր ներկայացնում: Եվ վերջապես երեխաներին առիթ տրվեց կիրառել այս քրիստոնեական առաքինությունն իրենց կյանքի առօրյայում:

Շարունակե՛ք սերմանել հյուրասեր լինելու առաքինությունը ձեր զավակների հոգում:

1. Ներգրավե՛ք նրանց ձեր տանն սպասվող հյուրերի ընդունելության կազմակերպման գործում:
2. Սովորեցրե՛ք նրանց լինել առատաձեռն տուն հյուր եկած երեխաների հետ խաղալու և նրանց հետ ժամանակ անցկացնելու հարցում:
3. Թող նրանք լսեն պապիկ-տատիկներին կամ տարիքով մեծ հարևաններին, ովքեր իրենց անձնական կյանքից հյուրասիրությանը վերաբերող պատմություններ զուգեն պատմեն:
4. Հրավիրե՛ք ձեր երեխայի կիրակնօրյա դպրոցի դասարանին ձեր տուն՝ հնարավորության դեպքում օրվա դասը ձեր տանն անցկացնելու համար:

ԳԼՈՒԽ Թ

# ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ

## ՇԱՏ ԼԱՎ ԲԱՆԵՐ ԵՆ ԱՆՈՒՄ ՄԻԱՍԻՆ

Ընտանիքները շատ լավ բաներ են անում միասին: Նրանք օգնում են իրար, միասին աղոթք անում եկեղեցում, ընկերների հետ ուրախ առիթներ նշում, այցելում բարեկամներին ու ծանոթներին և հյուրեր ընդունում իրենց տներում:



ԳԼՈՒԽ Թ

# ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ

## ՇԱՏ ԼԱՎ ԲԱՆԵՐ ԵՆ ԱՆՈՒՄ ՄԻԱՍԻՆ



### Ծնողների համար

Այս գլխի համար ընտրված ավետարանական չորս պատումներն ընդգծում են շատ բաներ, որ ընտանիքներն անում են միասին: Մատթեոսի 21.28-32 հատվածում խոսվում է, թե ինչպե՛ս ընտանիքներն օգնում են իրար: 12-ամյա Հիսուսի ընտանեկան այցերի մասին Ղուկասի 2.41-52 հատվածը ցույց է տալիս ընտանեկան պաշտամունքի կարևորությունը: Ուրախ առիթներով ընկերներին օգնելու ընտանիքի մասնակցությունը ներկայացվում է Հովհաննեսի 2.1-11 հատվածում Կանայի հարսանիքի մասին, որին ներկա էին նաև Հիսուսն իր մոր հետ: Ի վերջո, տանն ընկերներին հյուրընկալելու հաճույքի մասին խոսվում է Ղուկասի 10.38-42 հատվածում՝ Մարթայի և Մարիամի հյուրասիրության պատմության մեջ:

# ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐԻ ԱՌԱԿԸ

**«ՈՂՈՐՄԻ՛Ր ԻՆՁ, ՏԵ՛Ր»:**
**Սաղմոս 30.10**

## Հայտնագործենք

Երեխաներն օգնում են իրենց ծնողներին թեթև գործեր անելով: Մտածի՛ր, թե ինչպե՛ս ես օգնում ծնողներիդ տնային գործերում:

*X նշան դիր յուրաքանչյուր նկարի տակ, որը ցույց կտա քո օգնելու կերպը:*







*Նկարի՛ր մեկ այլ գործ, որ սիրով անում ես՝ օգնելու հայրիկիդ ու մայրիկիդ:*

*Կարդա՛ Աստվածաշնչի պատմությունը և պե՛ս, թե ինչպե՛ս էին եղբայրներն օգնում իրենց հորը:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՀԻՍՈՒՍԸ ՊԱՏՄՈՒՄ Է ՄԻ ԱՌԱԿ ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### Ըստ Մատթ. 21.28-32

*Սկսի՛ր թիվ 1-ից և ուսուցչի օգնությամբ ճի՛շտ կարգով համարակալիր պատմությունը ներկայացնող յուրաքանչյուր քարտը:*



«Տղանե՛ր, պիտի ինձ օգնեք այսօր խաղողը հավաքենք: Դե ի՛նչ, գնա՛նք այգի»:



Բենիկն արագ պատասխանեց. «Հայրի՛կ, ես այսօր գնում եմ ձուկ որսալու, չեմ կարող օգնել քեզ: Խաղողը չի շտապում, կսպասի մինչև վաղը»:



Բենիկը մտածում էր. «Ես պետք է հորս այն ասած լինեի. չէ՞ որ նրան պիտի օգնեի խաղողը հավաքել մինչև անձրևների գալը»: Ապա շտապեց այգի:



Հայրը դիմեց կրտսեր որդուն.
- Դո՛ւ ինչ կասես, Անդրե՛:
- Իհարկե, հայրի՛կ, ես կգամ և կօգնեմ քեզ, - պատասխանեց Անդրեն: Բայց նա չգնաց օգնելու:



Հայրն արագ էր աշխատում.
«Ա՜խ, երանի որդիներս այստեղ լինեին ու ինձ օգնեին: Վախենամ՝ չհասցնեմ խաղողները հավաքել մինչև անձրևների գալը և փչացնեմ բերքի մեծ մասը»:



«Հայրի՛կ, ես փոխեցի միտքս և եկա քեզ օգնելու: Կհասցնեմ միշտ էլ խաղալ, իսկ բերքը չենք կարող այդպես թողնել»:



«Ապրե՛ս Բենիկ, իմ խելացի տղա: Ես մենակ չէի կարող ամբողջ բերքը հավաքել»: Բենիկը շատ երջանիկ էր:



Անդրեն ներս մտավ:
«Տղա՛ս, ասացիր՝ կգաս, ես էլ սպասում էի քեզ: Որտե՞ղ էիր»: Անդրեն գիտեր, որ սխալ էր արել՝ չպահելով խոստումը:

*Գտի՛ր ներքևի թվերին համընկնող տառերը և գրի՛ր խաղողի ողկույզի մեջ: Արդյունքում կպարզես, թե հայրն ի՞նչ ասաց Բենիկին:*

**գ 3**　**ե 2**　**ե 5**　**գ 4**　**դ 7**　**կ1**　**ու 8**　**ս 6**

**1**　**2**　**3**　**4**　**5**　**6**　**7**　**8**



# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Ինչպիսի՞ օգնական եմ ես

Ծնողներդ կանչում են քեզ օգնելու տան թեթև գործերում: Ինչպե՞ս կզգայիր, երբ քեզ հանձնարարվեր մի բան անել տան համար:

Մեր պատմության մեջ Բենիկը չուզեց օգնել, բայց զղջաց և փոխեց միտքը: Իսկ կրտսեր եղբայրը՝ Անդրեն, այդ ասաց իր հորը, սակայն չգնաց օգնելու նրան:

Երբևէ նմանվե՞լ ես Բենիկին կամ Անդրեին:

*Նայի՛ր զույգ նկարներին և X նշա՛ն դիր նրա կողքին, որը ցույց կտար քո վարվելակերպը:*



- Թամա՛ր, խնդրում եմ պատրաստի՛ր ընթրիքի սեղանը:





- Ռաֆֆի՛, կտանե՞ս աղբը թափելու:



*Նկարի՛ր մի դրվագ, երբ օգնել ես ծնողներիդ տնային գործերում:*

## Օգնության աղոթք

Երբեմն մենք խոստանում ենք  օգնել փանեցիներին, բայց երբ մեր ընկերներից մեկը կանչում է դուրս խաղալու, մենք մոռանում ենք մեր խոստման մասին: Ինչպես Բենիկը փոխեց իր ընթացքը և օգնեց հորը, այնպես և մենք պետք է փոխենք մեր անպիտան սովորույթները:

*Սովորի՛ր հետևյալ աղոթքը և խնդրի՛ր, որ Աստված օգնի քեզ փոխելու անպիտան սովորույթները՝ լավերի:*



***Մոլորվածներին դարձի բերող Քրիստոս, դարձրո՛ւ ինձ իմ չար սովորություններից բարի սովորության, որպեսզի զղջամ մեղքերս և ազնիվ ու բարի գործեր անեմ. և ողորմի՛ր քո արարածներին ու նաև ինձ. ամեն:***

Սբ. Ներսես Շնորհալի

**Հոգևոր Բառարան**

**Ողորմություն՝**

Աստված սեր և բարություն է ցուցաբերում մեր հանդեպ:

# ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐՈՂ ԵՐԳ

*Տէ՛ր, ողորմիր, Տէ՛ր, ողորմիր,*
*Տէ՛ր, ողորմիր, Տէ՛ր, ողորմիր:*
*Արի՛, արի՛ Հոգիվ Բարի,*
*արի՛, փնտրի՛ր քո ոչխարին:*




## Տ ԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասը չորսից առաջինն է, որ կենտրոնանում է ընտանիքների կողմից միասին կատարվող գործերի վրա: Ծնողները հաճախակի են իրենց երեխաներին գործի դնում կամ հանձնարարում անել այս կամ այն տնային գործը: Փոքրիկները նույնպես կարող են անել տնային գործեր, ինչպես օրինակ՝ ավլել, փոշիները վերցնել, փոշեկուլը բերել, ծաղիկները ջրել, ընտանի կենդանիներին հոգ տանել և այլն: Երեխաները անկասկած ապրում են մի բան անելու հաճույքը, իսկ երբեմն էլ գործի ծանրությունը, մանավանդ երբ դա նրանց հանձնարարվում խաղալու ընթացքում:

Մատթեոս 21.28-32 համարներում զետեղված երկու որդիների առակը նրանց շատ հեշտ ընկալելի պատմություն է ներկայացնում: Նրանց գուցե ծանոթ լինեն երկու որդիների պատասխանները: Առաջին որդու պատասխանը նրանց կողմից կդիտվի որպես ընդունելի և լավ պահվածքի մոդել:

Դասի վարժությունը հրավիրում է երեխաներին մտածելու իրենց մասին՝ իբրև տան օգնականների: Սբ. Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ից քաղված աղոթքը հնարավորություն է տալիս երեխաներին օգնության համար դիմելու Տիրոջը, երբ թերանում են ճիշտ բանն անելուց:

Զգտե՛ք ձեր երեխայի մեջ զարգացնել արտահայտելու և համագործակցելու լավ սովորություններ: Նրանց կարողություններին համաչափ հանձնարարություններ տալը կզարգացնի նրանց ի զորու լինելու զգացումը, որն իր հերթին կօգնի նրանց նախաձեռնող ու հաջողակ լինել իրենց կյանքում և գործում:

Ահա առաջարկվող որոշ վարժություններ ձեր երեխայի հետ կատարելու համար:

1. Թող երեխան վերապատմի կամ դերախաղա երկու որդիների առակը: Ապա հարցրե՛ք, թե ո՞ր տղային է նա ամենաշատը հավանում:
2. Համագործակցաբար կազմե՛ք տնային թեթև գործերի մի ցուցակ, որը երեխան կկարողանա անել և այն փակցրե՛ք պատին: Ամեն գործն անելուց հետո ասպղանիշ դրե՛ք ցուցակի փվյալ հանձնարարության կողքին: Իրագործումների գծապատկերին նայելը կքաջալերի նրանց:
3. Սովորեցրե՛ք ձեր երեխային և միասին արտասանե՛ք «Հաւատով խոստովանիմ»-ի 17-րդ աղոթքը, որը տրված է այսօրվա դասում:
4. Երգե՛ք «Տէ՛ր, ողորմյա՛»-ն միասին, ինչպես տրված է այս էջի սկզբում:

ԴԱՍ 32

# ՀԻՍՈՒՍԸ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԷՐ ԳՆՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

**«ԵԿԵ՛Ք ԵՐԿՐՊԱԳԵՆՔ ՆՐԱՆ, ԽՈՆԱՐՀՎԵՆՔ ՄԵՐ ԱՐԱՐՉԻ՝ ՏԻՐՈՋ ԱՌՋԵՎ»:**

**Սաղմոս 94.6**

## Հայտնագործենք

Կիրակի առավոտյան եկեղեցու զանգերը ղողանջում են՝ քրիստոնյաներին եկեղեցի կանչելով: Շատ ընտանիքներ հավաքվում են միասին փառաբանելու և պաշտելու Աստծուն:



*Նկարով պատկերի՛ր ընտանիքիդ կամ ընկերներիդ հետ եկեղեցի գնալը:*

*Ընթերցի՛ր Աստվածաշնչի պատմությունը՝ գտնելու, թե Հիսուսն ի՞նչ արեց իր ծնողների հետ:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## Հիսուսը Զատկի տոնին գնում է Երուսաղեմ

### Ըստ Ղուկ. 2.41-52



Ամեն տարի Հիսուսը ծնողների հետ իջնում էր Երուսաղեմ՝ Զատկի տոնը նշելու համար: Հիսուսի տասներկու տարեկանը լրանալուց հետո դարձյալ գնացին Երուսաղեմ: Ծննդավայր Նազարեթ քաղաքից Հիսուսը բարեկամների ու ընկերների հետ ամբողջ երեք օր ճամփորդեց: Դա շատը զվարճալի էր: Ուրախ բացականչություններ սկսվեցին, երբ ընկերները նորից տեսան իրար:

- Տե՛ս, թե Սառան ինչպե՜ս է մեծացել ու գեղեցիկ աղջիկ դարձել, - ասաց տատիկը:

- Իսկ քո Հիսուսը ամրակազմ, կարգին տղա է դարձել», - ավելացրեց ընկերներից մեկը:

- Այո՛, բոլորս հպարտանում ենք նրանով, - պատասխանեց Մարիամը:

Երուսաղեմում Հիսուսը մտավ տաճար Զատիկը տոնելու համար: Զատկական ճաշին Հովսեփը բաժակը լցրեց հատուկ գինով:



Դարձյալ Հիսուսը կրկին լսում էր հոր պատմությունը, թե Աստված ինչպես Իր ժողովրդին ազատեց Եգիպտոսից: Տոնի ավարտից հետո բոլորը հրաժեշտ էին տալիս իրար ասելով.

- Կհանդիպենք հաջորդ տարի Երուսաղեմում:

Նազարեթ վերադարձի ճանապարհին Մարիամը նկատեց, որ Հիսուսն ուխտավորների խմբի հետ չէ: Սկսեց հարցուփորձ անել, եթե որևէ մեկը տեսել է իր որդուն: Սակայն ոչ ոք տեղյակ չէր: Հովսեփը հանգստացրեց նրան ասելով.



- Մի՛ վախեցիր, ետ կգնանք Երուսաղեմ և կգտնենք նրան:

Ապա շտապ վերադարձան Երուսաղեմ: Նրանց սիրտը վախ էր ընկել: Հիսուսին փնտրեցին երեք օր և վերջապես գտան տաճարում՝ վարդապետների կողքին նստած և նրանց հետ զրուցելիս:



- Տղա՛ս, դու մեզ շատ վախեցրիր, - սրտատրոփ ասաց Մարիամը, - մենք ամենուր քեզ էինք փնտրում:

- Ինչո՞ւ էիք փնտրում, մայրի՛կ, չգիտեի՞ք, որ Հորս տանը պետք է լինեմ:

Նրա զրուցակից վարդապետները հիացել էին:

- Դուք շատ խելացի տղա ունեք, - ասացին նրանք ծնողներին:

Այնուհետև Հիսուսը Հովսեփի և Մարիամի հետ վերադարձավ Նազարեթ: Ծնողների հսկողության տակ շարունակեց մեծանալ ու հասակ առնել: Նա ամեն շաբաթ ծնողների հետ գնում էր ժողովարան և տարին մեկ անգամ՝ Երուսաղեմ Զատկի տոնակատարության համար:

# Կյանքը եկեղեցում

## Մենք եկեղեցի ենք գնում ընտանիքով

Հիսուսը ծնողներից՝ Հովսեփից ու Մարիամից սովորեց ժամանակ հատկացնել Աստծուն պաշտելու համար: Նրանք ամեն շաբաթ գնում էին ժողովարան: Իսկ տարին մեկ անգամ Զատկի համար ճամփորդում Երուսաղեմ:

Մենք նույնպես մեր ծնողներից, մեր պապիկից ու տատիկից ենք սովորել եկեղեցի գնալ Աստծուն աղոթելու համար: Հատկապես կիրակնօրյա առավոտյան եկեղեցի գնալու և Աստծուն երկրպագելու ժամանակն է:

*Օգտագործի՛ր հուշումները խաչբառը լուծելու համար և պարզի՛ր, թե ինչպե՞ս են կիրակի օրերը պաշտում Աստծուն:*

1. **երկրորդ տառը** **Աստված** բառի:
3. **վերջին տառը** **տաճար** բառի:
5. **առաջին տառը** **պաշտել** բառի:
7. **առաջին տառը** **Տեր** բառի:
9. **երրորդ տառը** **շարական** բառի:
11. **առաջին տառը** **գինի** բառի:
12. **վերջին տառը** **եկեղեցի** բառի:
13. **առաջին տառը** **նշխար** բառի:

## Մենք մասնակցում ենք . . .

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ու | | ք | | ա | | ա | | ա | | | |

## Քրիստոնյաներն ուխտի են գնում Երուսաղեմ

Զատկի տոնին մենք հիշում ենք այն օրը, երբ Հիսուսը հարություն առավ մեռելներից: Դա մեզ համար շատ ուրախ տոն է:

Երուսաղեմում մի եկեղեցի է կառուցված ճիշտ այն վայրում, որտեղից Հիսուսը հարություն առավ: Ամեն տարի բազմաթիվ քրիստոնյաներ գնում են այս եկեղեցին և աղոթում, փառաբանում ու երկրպագում Աստծուն:

Կես գիշերին հոգևորականների ու ժողովրդի երգեցողության պահին եպիսկոպոսը դուրս է գալիս վառած մոմը ձեռքին: Մոմի լույսը հիշեցնում է մեզ, որ Հիսուսը լույսի նման հարություն առավ մահացածներից: Բոլորը մոտենում են վառելու իրենց մոմերը և քահանաների հետ երգում են՝



**Քրիստոս հարյավ ի մեռելոց .....**

Նրանց հետ դու ևս փառաբանի՛ր Հիսուս Քրիստոսին: Նկարի՛ր քեզ ներքևի պատկերում և գունավորի՛ր քո մոմը, որպեսզի պայծառ լույս տա Զատկին:

**Հոգևոր Բառարան**

**Տաճար՝**

վայր, որտեղ Հիսուսը ծնողների հետ պաշտում էր Աստծուն:

## Մենք հոգևոր երգով փառաբանում ենք Հիսուսի Հարությունը




## Տանը՝ ընտանիքի հետ

Այս դասի ընթացքում ձեր երեխան ծանոթացավ ընտանիքով Աստծուն պաշտելու փորձառությանը: Ընտանիքի հետ միասին եկեղեցի գնալը բարեբախտաբար յուրաքանչյուր երեխայի կյանքի մաս է կազմում: Հատկապես տոնական օրերին եկեղեցի հաճախելիս երեխան մեծապես տպավորվում է և այն դրոշմվում է նրա հիշողության մեջ՝ որպես կարևոր սովորություն և ընտանեկան կյանքի հետ կապված նշանակալի իրադարձություն:

Զատկի տոնին Երուսաղեմի տաճար Հիսուսի՝ ընտանիքի և ընկերների հետ ճամփորդության պատմությունը գեղեցիկ կերպով միահյուսում է ընդհանրացած փորձառությունը Հիսուսի և իրենց միջև:

Դասը հատվող եզրեր է ապահովում Հիսուսի՝ ընտանիքի հետ պաշտամունքի գնալու և երեխայի միևնույն փորձառության համար: Հիսուսը ծնողներից սովորեց պաշտել Աստծուն: Ճիշտ այդպես սովորեցին նաև մեր երեխաները իրենց ծնողներից, պապիկներից ու տատիկներից: Կիրակնօրյա պատարագը նրանց համար կարող է լինել հատուկ ժամանակ Աստծուն պաշտելու համար:

Միևնույն ժամանակ, մանուկ Հիսուսի ուխտագնացության փորձառությունը կապակցվում է Երուսաղեմի Սուրբ Հարության տաճար ուխտագնացության հետ: Երեխաներին սովորեցվում է երգել Հարության ժամամուտը:

**Քրիստոսը հարություն առավ մեռելներից,**
**Իր մահով մահին հաղթեց,**
**Եվ Իր Հարությամբ մեզ կյանք պարգևեց:**
**Նրան փառք հավիտյանս. ամեն:**

Ահա, թե ի՞նչ կարող եք անել.

1. Լսե՛ք, թե ձեր երեխան ինչպես է պատմում Հիսուսի՝ ծնողների հետ Երուսաղեմ ուխտի գնալու պատմությունը:
2. Սովորություն դարձրե՛ք ամեն կիրակի գնալու եկեղեցի և մասնակցելու Սուրբ Պատարագի արարողությանը:
3. Նշե՛ք տոները, հատկապես եկեղեցու հինգ տաղավար տոները, երեխայի հետ միասին եկեղեցի գնալով:
4. Երգե՛ք այս էջի վերևում տրված Հարության շարականը ձեր երեխայի հետ: Հաճախակի կրկնե՛ք, որպեսզի Զատկական պատարագին ներկա գտնվելիս երեխան ճանաչի այն և ձայնակցի երգեցողությանը:

ԴԱՍ 33

# ՀԻՍՈՒՍԸ ՄՈՐ ՀԵՏ ԳՆՈՒՄ Է ՀԱՐՍԱՆԻՔ

**«ՀԻՍՈՒՍՆ ԱՅՍ ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆՆ ԱՐԵՑ ԳԱԼԻԼԻԱՅԻ ԿԱՆԱ ՔԱՂԱՔՈՒՄ ...»:**

**Ըստ Հովհաննեսի 2.1-11**

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Հովնանը նշում էր իր վեցերորդ փարեղարձը: Ծննդյան խնջույքին հրավիրվել էին նաև նրա ընկերները: Նայի՛ր նկարին և ներկայացրո՛ւ, թե ի՞նչ է փեղի ունենում: Հայրերը և մայրերը շափ երազանքներ են կապում իրենց երեխաների հետ:



*Ներքևում նկարի՛ր, թե դու ի՞նչ կանեիր քո ընկերոջ ծննդյան օրը նրան ուրախացնելու համար:*

*Աստվածաշնչի այսօրվա պատմության մեջ փե՛ս, թե Հիսուսն ի՞նչ արեց հարսանեկան խնջույքի ժամանակ:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՀԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՇՔԸ

### Ըստ. Հովի. 2.1-11

Կանա քաղաքում հարսանիք էր: Հեռու-մոտիկ բոլոր ընկերները եկել էին երջանկություն մաղթելու փեսային ու հարսին: Մարիամն այնտեղ էր: Հիսուսը նույնպես հրավիրված էր այդ հարսանիքին իր աշակերտների հետ: Նրանք նստել էին ուտելիքներով ու խմիչքներով լի տոնական սեղանների շուրջ: Երգն ու երաժշտությունն ուրախությամբ էին լցնում հարսանեկան խնջույքը, և հյուրերը պարում էին նորապսակ զույգի շուրջը: Որոշ ժամանակ անց Մարիամը նկատեց, որ հյուրերից ոմանք անտրամադիր են: «Գինին վերջացավ», - ցածր ձայնով ասաց մի տարեց մարդ: Մարիամը շտապեց օգնության: Գնաց որդու մոտ ու ասաց.



- Հիսո՛ւս, գինին վերջացել է: Հիսուսը նայեց մորը և պատասխանեց.

- Մայրի՛կ, ի՞նչ ես ուզում, որ անեմ: Իմ ժամանակը դեռ չի հասել:

Սակայն Մարիամը վստահ էր իր որդու վրա: Նա մատուցողներին ասաց. «Արե՛ք այն, ինչ նա կպատվիրի ձեզ»: Մատուցողները փոքր-ինչ շփոթված նայեցին իրար:



Նրանք կանգնած էին մառանի դռան առջև, որտեղ դրված էին քարե վեց մեծ կարասներ: Յուրաքանչյուր կարաս մոտ 100 լիտր տարողություն ուներ: Հիսուսն ասաց նրանց.

- Կարասները բերնեբերան լցրե՛ք ջրով:

Մատուցողներն անմիջապես կատարեցին պատվերը: Ապա Հիսուսն ասաց.

- Այժմ դրանից լցրե՛ք բաժակը և տարե՛ք սեղանապետին: Մատուցողները սկզբում չհասկացան, բայց բաժակը մտցրին կարասի մեջ: Այն լցնելուց հետո շատ զարմացան, որ ջուրը կարմիր է, գինի է դարձել:

Նրանք վերցրին գինի դարձած ջուրը և տարան սեղանապետին: Նա խմեց գինին: Առանց իմանալու, թե որտեղից է գինին, կանչեց փեսային ու ասաց.





- Չեմ հասկանում, ամեն մարդ նախ լավագույն գինին է մատուցում, ապա նոր հանում վատը: Դու, ի՞նչ է, լավը պահել ես վերջո՞ւմ:

**Հոգևոր Բառարան**

**Հրաշք՝**

Հիսուսն արեց բաներ, որոնք անհնար էր՝ տեղի ունենային: Սա նշան էր, որ Ինքն Աստված է:

Մատուցողները հաստատ գիտեին, թե որտեղից եղավ գինին: Սա առաջին նշանն էր, որ Հիսուսը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքում՝ ցույց տալով Իր փառքը, և աշակերտները հավատացին Նրան:

*Տեքստում գտի՛ր գունավոր տառերը և գրի՛ր յուրաքանչյուր կճուճի մեջ ըստ գույների, պարզելու, թե ինչի՞ համար Հիսուսը գնաց Կանա:*

հ  ք

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Հարսանիքը կատարվում է եկեղեցում

Հիսուսը սիրում էր ուրախանալ իր ընտանիքի և ընկերների հետ: Կանայի հարսանիքին ներկա գտնվելով՝ Տերը ցույց տվեց Իր ուրախությունը փեսայի և հարսի համար՝ նրանց հետ տոնելով հարսանեկան խնջույքը:

Երբևէ ներկա եղե՞լ ես եկեղեցում հարսանեկան արարողության: Հարազատներն ու ընկերները գալիս են եկեղեցի տեսնելու փեսայի ու հարսի խոստումը, որ պիտի սիրեն և հարգեն իրար: Ահա այն ամենը, ինչ կատարվում է եկեղեցում:

*Գրի՛ր նախադասության համարը՝ նկարագրությանը համընկնող յուրաքանչյուր նկարի շրջանակի մեջ:*



1. Փեսան ու հարսը փոխանակում են օրհնված մատանիները:
2. Քահանան աղոթքով խնդրում է, որ Աստված օրհնի զույգին, և նրանց գլխին դնում թագանման պսակներ:
3. Փեսան ու հարսը դառնում են իրենց նոր ընտանիքի թագավորն ու թագուհին:
4. Մարդիկ ոտքի են կանգնում՝ ի պատիվ փեսայի ու հարսի:
5. Փեսան ու հարսը խմում են օրհնված գինին:









# Եկե՛ք համեմատենք

**Հիսուսը Կանայի հարսանիքում** | **Ես՝ ________________, հարսանիքում**

**ուրախություն  աղոթեցի  մոր  գինու  ընտանիքիս  օրհնեց  երգեցի**

*Օգտվի՛ր բառացանկից՝ նախադասությունները լրացնելու համար:*

1. Հիսուսը հարսանիք գնաց իր __ __ __ և աշակերտների հետ:
2. Հիսուսը __ __ __ __ __ __ __ __ __ բերեց հարսանեկան խնջույքին: Նա ջուրը փոխեց __ __ __ __ :
3. Հիսուսը __ __ __ __ __ __ փեսային ու հարսին:
4. Ես __ __ __ __ __ __ __ __ __ և բարեկամներիս հետ գնացի զարմիկիս հարսանիքին:
5. Ես __ __ __ __ __ __ ու պարեցի, և բոլորս շատ ուրախացանք:
6. Ես փեսայի ու հարսի համար եկեղեցում __ __ __ __ __ __ __ :

## Մենք երգում ենք փեսայի ու հարսի համար




## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասում ընդգծվում է միասին կատարվող ընտանեկան հավաքույթները, որը կապակցվում է Մարիամ Աստվածածնի և Հիսուսի՝ Գալիլիայի Կանա քաղաքում հարսանիքին մասնակցելու պատմության հետ, երբ Հիսուսը ջուրը վերածեց գինու՝ իբրև հրաշքներից առաջինը: Ընտանեկան հավաքույթները և տոնախմբություններն ուրախության առիթներ են, և երեխաները դրանց մի մասն են կազմում:

Մարիամն ու Հիսուսը մասնակցեցին իրենց ընկերների հարսանեկան ուրախությանը: Հիսուսն օգնեց նրանց՝ ջուրը գինու փոխելով:

Երեխաները ծանոթ են այն եղանակներին, որոնցով կատարվում են ընկերների կամ ընտանեկան ուրախությունները: Նրանց ներկայացվում է նաև Սուրբ Պսակի խորհրդի հիմնական պահերը: Նրանք կարողացան համեմատել հարսանեկան արարողությանն իրենց մասնակցությունը՝ Կանայի հարսանիքում Հիսուսի ներկայության հետ:

Ահա մի շարք եղանակներ, որոնցով կարող եք հարստացնել ձեր երեխայի փորձառությունը ընկերական կամ ընտանեկան արարողություններին մասնակցելու առնչությամբ:

1. Երեխային հանձնարարի՛ր վերապատմել Կանայի հարսանիքի պատմությունը՝ բացահայտելով հարսանիքին ներկա կարևոր անձանց: Գուցե նաև օգնե՛ք դերակատարել այն:
2. Հիշե՛ք ձեր երեխայի հետ այն արարողությունները, որոնց մասնակցել եք՝ նշանդրեքներ, հարսանիքներ, ծնունդներ, անվանակոչություններ, մկրտություններ և այլն: Բացահայտե՛ք, թե ինչպե՛ս իբրև ընտանիք օգնեցիք, որպեսզի հիշյալ արարողություններն ավելի լավ և ուրախ անցնեն: Հանձնարարե՛ք, որ պատկերի մի նկար վերը նշված արարողություններից հիշարժան մի դրվագի մասին:
3. Թող երեխան նկարի նաև, թե ի՞նչ է կատարվում հարսանեկան արարողության ժամանակ՝ ըստ այսօրվա դասում իրենց սովորածի: Եթե ներկա եք եղել հարսանիքի ձեր մանուկի հետ, թող նա վերհիշի այդպիսի առիթները և խոսի իր տպավորությունների մասին:
4. Ձեր երեխայի հետ միասին երգե՛ք այս էջի վերևում ներկայացված շարականի հատվածը, որը երգվում է Սուրբ Պսակի խորհրդի ընթացքում:

**ԴԱՍ 34**

# ՄԱՐԹԱՆ ԵՎ ՄԱՐԻԱՄԸ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒՄ ԵՆ ՀԻՍՈՒՍԻՆ

**«ՏԵ՛Ր, ՔԵԶ ՓՈՒՅԹ ՉԷ՞, ՈՐ ՔՈՒՅՐՍ ԻՆՁ ՄԵՆԱԿ Է ԹՈՂԵԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՄԵՋ»:**

**Ըստ Ղուկասի 10.40**

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ե՛րբ ես վերջին անգամ փանը հյուրեր ընդունել ճաշկերույթի: Հիշո՛ւմ ես, թե ճաշին ինչ հյուրասիրեցիք: Ներքևում նկարի՛ր սեղանի վրա մատուցված ճաշը և մյուս ուտելիքները, որ միասին վայելեցիք:

Ո՛վ ամենաշատն օգնեց մայրիկիդ ճաշը պատրաստելիս: Արդյոք դո՛ւ, թե՛ եղբայրդ կամ քույրդ: Ո՛վ ամենաքիչն օգնեց:

*Դապկերի՛ր դեմքը, թե ինչպե՛ս զգացիր:*



*Աստվածաշնչի այսօրվա պատմության մեջ տե՛ս, թե ինչպե՛ս քույրերը հյուրասիրեցին Հիսուսին:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## Հիսուսն այցելում է Մարթային և Մարիամին

### Ըստ Ղուկ. 10.38-42



Հիսուսը շատ էր աշխատում ամեն օր: Նա ժողովրդին խոսում էր այն սիրո մասին, որ Աստված ուներ մարդկանց հանդեպ: Տերը բուժում էր հիվանդներին, ուրախացնում էր փխուր մարդկանց, կերակրում էր քաղցածներին և ժամանակ էր անցկացնում երեխաների հետ:

Մի օր նա անցնում էր Բեթանիա կոչվող գյուղի մոտով: Այնտեղ էին ապրում նրա ընկերներից երկուսը՝ Մարթա և Մարիամ անունով քույրերը: Մոտեցավ նրանց տանը և թակեց դուռը: Մարթան դուռը բացեց և ասաց. «Համեցե՛ք, նե՛րս եկեք մեր տուն»: Ապա արագ ներս անցավ և կանչեց քրոջը. «Մարիա՛մ, արի՛, մեր ընկեր Հիսուսն է եկել մեզ այցի»:



Մարիամը թողեց ինչ որ անում էր և շտապեց բարևելու նրան: Հիսուսն արդեն հարմար նստել էր բազմոցին: Մարիամը նստեց գետին դեմքով դեպի Հիսուսը, և ուշադիր լսում էր նրա խոսքերը:

Այնուհետև Մարթան գնաց խոհանոց: «Ես պետք է մի ճաշ պատրաստեմ մեր ընկերոջ համար: Նա պետք է որ սոված լինի», - մտածեց Մարթան: Նա վառեց օջախը հավի միս տապակելու համար, մի աման ալյուր հանեց և խորը շունչ քաշեց. «Ա՜խ, դեռ այնքա՜ն անելու բան կա: Շուտով ճաշի ժամն է»:

- Մարիա՛մ, խնդրում եմ արի խոհանոց, - կանչեց նա:

Անցավ հինգ րոպե, տասը, ապա՝ տասնհինգ, բայց Մարիամը չէր գալիս: Մարթան շտապեց հյուրասենյակ: Մարիամը պարզապես նստած զրուցում էր Հիսուսի հետ: «Նա չի՞ մտածում ինձ օգնելու մասին», - իր մտքում ասաց Մարթան: Ապա մոտեցավ Հիսուսին և դժգոհեց:

- Հիսո՛ւս, քեզ փույթ չէ՞, որ քույրս ինձ մենակ է թողել, և ամբողջ գործերը մնացել են ինձ վրա: Խնդրո՛ւմ եմ, ասա՛, որ օգնի ինձ:



Հիսուսը սիրալիր նայեց Մարթային և ասաց.

- Մարթա՛, Մարթա՛, գիտեմ, որ անհանգստանում ես շատ ուտելիքներ պատրաստելու համար: Լավ է, որ ինձ համար ճաշ ես պատրաստում: Բայց կարևոր է նաև, որ գաս, նստես իմ կողքին և միասին զրուցենք: Ի՞նչ կլինի, եթե դու ևս գաս ու մեզ միանաս:

*Ընտրի՛ր ճիշտ բառերը՝ նախադասությունները լրացնելու համար:*










1. Մարթան հրավիրեց Հիսուսին և ճաշ __ __ __ __ նրա համար:

2. Մարիամը բարևեց Հիսուսին և նստեց՝ նրան __ __ __ __ __ համար:

3. Հիսուսը խնդրեց, որ Մարթան ևս գա և __ __ __ __ իր հետ:

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Ինչպե՞ս եմ հյուրեր ընդունում

Մարթան և Մարիամը հյուրընկալեցին Հիսուսին: Մարթան շատ էր զբաղված նրա համար ճաշեր պատրաստելով: Նաև զայրացել էր, որ քույրը չէր օգնում իրեն: Իսկ Մարիամը հաճույքով զրուցում էր Հիսուսի հետ և լսում նրա խրատները:

Մտածի՛ր այն պահերի մասին, երբ հյուրեր եք ընդունել ձեր տանը: Ինչպե՞ս հյուրասիրեցիք նրանց:

*Նկարի՛ր Մարթայի հատվածում, եթե զբաղված ես եղել հյուրերին ուտելիք մատուցելով: Նկարի՛ր Մարիամի հատվածում, եթե վայելել ես ժամանակը հյուրերի հետ պարզապես խաղալով և զրուցելով:*

**Մարթա** **Մարիամ**

*Ընտրի՛ր նկարը, որը ցույց կտա, թե ինչպե՞ս դու կընդունեիր Հիսուսին:*







# ՄԵՐ ՔԱՀԱՆԱՅԻՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՏՈՒՆ

Մեր քահանան տարին մի քանի անգամ մեր տուն է գալիս: Նա այցելում է մեզ ուրախ առիթներով և այն օրերին, երբ մեզանից մեկը հիվանդ է: Հատուկ երկու առիթները Սուրբ Ծնունդը և Սուրբ Զատիկն են: Տեր հայրն այցելում է ամեն տուն, օրհնում բոլոր բնակիչներին և նրանց բնակարանը:

1. Մայրիկը հատուկ սկուտեղ է պատրաստում, որի վրա դնում է մի բաժակ ջուր, մի քանի կտոր հաց կամ լավաշ և ամանով աղ:

2. Քահանան __ __ __ __ __ է դնում սկուտեղի վրա:

3. Տեր հայրը նաև անուշահոտ խունկ է ծխում:

4. Տնօրհնեքի վերջում յուրաքանչյուրս խմում ենք օրհնված ջուրը: Մայրիկը օրհնված աղն օգտագործում է ճաշեր եփելիս և օրհնված նշխարը պահում հացի կամ ալյուրի ամանում:

*Գունավորի՛ր սկուտեղի բոլոր առարկաները, որոնք քահանան օրհնում է:*



**Հոգևոր Բառարան**

**Նշխար՝**

հաց, որն օգտագործվում է Սուրբ Հաղորդության համար:

## Ես սովորեցի՝ ինչպես ողջունել քահանային

Երբ որ քահանան գալիս է մեր տուն, ես ուրախ ողջունում եմ նրան, համբուրում աջը և ձեռքին բռնած խաչը:

Ասում եմ.



«Օրհնեցե՛ք, Տե՛ր Հայր»:

Քահանան օրհնում է ինձ՝ ասելով.



«Աստվա՛ծ օրհնի»:

## Տանը՝ ընտանիքի հետ

Հյուրասեր լինելը շատ ցանկալի հատկություն է, որ մարդ պետք է ունենա: Բացի ընտանիքով միասին ճաշելուց, երեխաները նաև փորձառություն ունեն ճաշելու իրենց ընկերների հետ ինչպես իրենց, այնպես և ընկերոջ տանը:

Այս դասում Հիսուսի ընկերներ Մարթան, Մարիամը և Ղազարոսը հյուրընկալում են նրան իրենց տանը (Ղուկաս 10. 38-42):

Մարթայի և Մարիամի այս գեղեցիկ պատմությունը շատ բան ունի սովորեցնելու մեր երեխաներին, ովքեր շատ հաճախ դժգոհում են, որ իրենց եղբայրը կամ քույրը «ոչ մի բանով չօգնեց» իրենց ընկերներին հյուրասիրելիս:

Մարթայի և Մարիամի հյուրասիրելու մոտեցումները համեմատող վարժության միջոցով երեխան սովորեց, որ Հիսուսը գնահատում է երկուսին էլ՝ թե՛ ճաշը պատրաստողին և թե՛ հյուրին զբաղեցնողին:

Դրանից հետո ներկայացվում է հյուրասիրության կարևորությունը և քահանայի ավանդական այցելությունը մեր տները՝ հատկապես Սուրբ Ծննդյան և Զատկի օրերին տնօրհնեք կատարելու համար: Ի վերջո երեխան սովորում է քահանային բարևելու պատշաճ կերպը:

Ահա որոշ եղանակներ, որոնցով կկարողանաք քրիստոնեական հյուրասիրությունը ամրապնդել ձեր երեխաների մեջ:

1. Տանը հյուրեր ընդունելիս կանչե՛ք ձեր երեխային մասնակցելու նրանց տուն հրավիրելու, պատշաճ ողջունելու և նրանց զբաղեցնելու գործին, հատկապես, երբ նրանց հետ մանուկներ կան:
2. Հրավիրե՛ք ձեր եկեղեցու քահանային այցելելու ձեր տուն, երբ ձեր երեխաները տանն են:
3. Քաջալերե՛ք երեխային, որ տուն կանչի իր ընկերներին խաղալու և ամրապնդե՛ք նրա մեջ հյուրասեր լինելու դրական սովորությունը, օրինակ՝ խաղալիքները միասին կիսել, ընկերաբար խաղալ և այլն:
4. Ամեն անգամ Տեր Հայրին հանդիպելիս խրախուսե՛ք ձեր երեխային նրան պատշաճ կերպով բարևել՝ ինչպես ներկայացված է այս դասում:

ԳԼՈՒԽ Ժ

# ՄԱՍՏԾՈ ԸՆՏԱՆԻՔԸ ՏՈՆՈՒՄ Է

Եկեղեցին նշում է շատ տոներ: Գարնանը տոնում ենք Հիսուս Քրիստոսի Հարությունը, իսկ դրանից 40 օր անց՝ մեր Տիրոջ Համբարձումը դեպի երկինք:



## ԳԼՈՒԽ Ժ

# ԱՍՏԾՈ ԸՆՏԱՆԻՔԸ ՏՈՆՈՒՄ Է



### Ծնողների համար

Քրիստոսի Հարության և Համբարձման տոներին նվիրված դասերը երեխաներին ուսուցանում են, թե ինչպե՞ս է Եկեղեցին նշում այս երկու տոները: Հիսուսի Հարությունը հիմքն է քրիստոնեական մեր հավատի, իսկ Համբարձումը հաստատումն է այն խոստման, որ Հիսուսը պիտի գա՝ հավատացյալներին Իր հետ Երկնքում բնակեցնելու համար:

ԴԱՍ 35

# ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

**«ԵՍ ՏԵՍԱ՛ ՏԻՐՈՋԸ»:**
**Ըստ Հովհ. 20.18**

## Հայտնագործենք

Նկարում պատկերված երեխաները ներկում են զատկական հավկիթները: Դու երբևէ ներկե՞լ ես: Ո՞վ օգնեց քեզ դրանք ներկել: Ի՞նչ օգտագործեցիր հավկիթները ներկելու համար:



*Ներկի՛ր այս զատկական հավկիթները: Փորձի՛ր դրանք ներկել այնքան գեղեցիկ, ինչքան կարող ես:*







*Աստվածաշնչի այսօրվա պատմության մեջ տե՛ս, թե ինչպե՞ս ենք նշում Սուրբ Հարության տոնը:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ
## Կանայք Հիսուսի գերեզմանի մոտ
### Ըստ Ղուկ. 7.36-8.3, 23.44-24.12, Մատթ. 28.1-10, Մարկ. 16.1-8, Հովh. 20.11-18

*Ուսուցչի օգնությամբ կարդա՛ պատմությունը, ապա գունավորի՛ր նկարը:*



Երբ Հիսուսը գյուղից ճամփորդում էր քաղաք, ամենուր ուսուցանելով ու Աստծո փրկության ճանապարհները ցույց տալով, որոշ մարդիկ քայլում էին Տիրոջ հետ: Հիսուսին ուղեկցողների մեջ կային նաև կանայք: Ոմանք օգնում էին Հիսուսին իրենց փողերից ելնելով, իսկ ոմանք էլ միանում էին Նրա խոսքերը լսելիս:

Այնտեղ էր նաև Մարիամը՝ Հիսուսի մայրը, Սաղոմեն և Հակոբոսի մայր Մարիամը, Հովհաննան, Շուշաննան և այլ կանայք, ովքեր օգնում էին Հիսուսին, բայց մեզ հայտնի չեն նրանց անունները: Տիրոջ հետևորդների շարքում էր նաև Մարիամ Մագդաղենացին: Հիսուսն օգնել էր նրան շատ անգամներ փրկելով վատ բաներից: Հիսուսը նրա լավագույն ընկերն էր:

Մի ուրբաթ օր, Երուսաղեմում, Մարիամը և մյուս կանայք նայում էին խաչի վրա մահացող Հիսուսին:



Կանայք քայլում էին փխուր և լաց էին լինում, քանի որ գնում էին պատրաստելու խնկերը:

Կիրակի օրը, արևածագից առաջ, կանայք գնացին գերեզման Հիսուսի մարմինը յուղերով ու անուշահոտ խնկերով օծելու համար: Ճանապարհին նրանք հարցնում էին միմյանց. «Ինչպե՞ս ենք գլորելու գերեզմանի դռան մեծ քարը»: Հանկարծ այդ պահին գետինը դղրդաց: Կանայք սարսափեցին: Պայծառ լույս շողաց նրանց կանգնած տեղում: Սպիտակ հագած մի հրեշտակ հայտնվեց գերեզմանի մուտքի առջև: Հրեշտակն ասաց. «Մի՛ վախեցեք: Գիտեմ, որ խաչված Հիսուսին եք փնտրում: Նա այստեղ չէ: Եկե՛ք և տեսե՛ք այն տեղը, ուր նրան դրեցին: Նա հարություն է առել: Գնացե՛ք Գալիլիա և աշակերտներին հայտնե՛ք, որ Տերն այնտեղ կհանդիպի նրանց»:

Կանայք գերեզմանից հեռացան երկյուղով, բայց մեծ ուրախությամբ: Այդ պահին մի մարդ հանդիպեց նրանց ու ասաց՝ ողջո՜ւյն: Մարիամը կարծեց, թե նա պահակներից է, և հարցրեց.

- Գիտե՞ս, թե ուր տարան իմ Տիրոջ՝ Հիսուսի մարմինը: Մարդը պատասխանեց.

- Մարիա՛մ:

Հենց այդ պահին Մարիամի սիրտը վկայեց, որ նա Հիսուսն է: Նա ծունկի իջավ Նրա ոտքերի առաջ և բացականչեց.

- Վարդապե՜տ, ի՜մ ուսուցիչ: Հիսուսն ասաց.

- Մարիա՛մ, գնա՛, հայտնի՛ր իմ եղբայրներին, որ ես հարություն եմ առել: Ես ողջ եմ:

Մարիամը վազեց արագ ինչքան կարող էր և բարձրացավ այն սենյակը, որտեղ բոլոր աշակերտները Մարիամի՝ Հիսուսի մոր հետ հավաքված էին: Նա ուրախությունից բացականչեց.

## ԵՍ ՏԵՍԱ՛ ՏԻՐՈՋԸ, ՆԱ Ո՛ՂՋ Է:



# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Մարիամ Մագդաղենացին գնում է պատմելու բոլորին



Մարիամն այնքան ուրախ էր, որ Հիսուսը ողջ է, որ ուզում էր ամբողջ աշխարհին պատմել նրա մասին: Նա գնաց հեռու-հեռավոր քաղաք՝ Հռոմ անունով: Հռոմը մեծ ու խճողված քաղաք էր: Մարիամը քայլեց բազմամարդ փողոցներով՝ ուրախ բարևելով իր ճանապարհին հանդիպող մարդկանց և նրանց պատմելով Հիսուսի մասին:

Շուտով Հռոմում ապրողները սովորեցին Աստծո սիրո մասին: Մարիամը պատմում էր նրանց, թե ինչպե՜ս էր Հիսուսը սիրում բոլորին, և որ Նա խաչվեց, բայց կրկին կենդանացավ՝ հարություն առավ:

Նա գնաց ողջունելու նաև Հռոմի կայսրին՝ ասելով. «Քրիստո՛ս հարյավ»: Կայսրն ասաց. «Ես կհավատամ, որ Քրիստոսը հարություն է առել միայն այն դեպքում, եթե հավը կարմիր ձու ածի»:

Մարիամը ցածրաձայն աղոթեց Հիսուսին, որ օգնի կայսերը հավատալ: Ապա ձեռքը մտցրեց շուկայից գնած ձվի զամբյուղի մեջ և հանեց մի հավկիթ: Ո՛վ զարմանք: Նրա ձեռքին կարմիր հավկիթ էր: Այժմ կայսրը հավատաց, որ Հիսուս Քրիստոսն իսկապես հարություն է առել մահացածներից:

Այդ ժամանակից ի վեր քրիստոնյաները վառ կարմիր գույնով են ներկում ձվերը Զատկի տոնին, որպեսզի ամբողջ աշխարհին հայտնեն, թե Հիսուս Քրիստոսը հարություն է առել:

*Գունավորի՛ր Մարիամի ձեռքի հավկիթը ճիշտ գույնով:*

**Հոգևոր Բառարան**

**Քրիստոս հարյավ՝**

զատկական ողջույն:

# Մենք շարունակում ենք ճանաչել աշխարհը

Հիշում եմ՝ չորս տարեկան էի, երբ հայրս ու մայրս ինձ տարան եկեղեցի Զատկի տոնին, և արդեն մութն ընկել էր: Դեռ լսում էի երգչախմբի երգեցողությունը. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Երբ արթնացա հորս գրկում, արդեն Զատկի առավոտը բացվել էր:

Եկեղեցուց վերադարձանք տուն: Այդ օրվա նախաճաշը հատուկ էր, կարմիր ներկված հավկիթները մեզ էին սպասում: Ես սովորեցի, որ Զատկի օրը մենք յուրահատուկ բաներ ենք անում: Նայի՛ր նկարներին՝ դրանք պարզելու համար:

Այսպիսի ✓ նշան դիր այն նախադասությունների սկզբի վանդակներում, որոնք նկարագրում են պատկերները:



☐ Ես գնում եմ դպրոց:

☐ Ես ձվակռիվ եմ խաղում:





☐ Ես այցելում եմ հարևաններին ու ընկերներին՝ ասելով. «Քրիստոս հարյավ»:

☐ Հարևաններն ինձ ներկած հավկիթներ են տալիս:

☐ Ես չամիչով փլավ եմ ուտում:

☐ Ես մաքրում եմ սենյակս:

## Մենք երգում ենք մեր զատկական ուրախությունը

*Փա՛ռք քո հարության, Տե՛ր.*
*Ես անդադար օրհնում եմ քեզ, Քրիստո՛ս,*
*իմ կյանքի բոլոր օրերին:*




## Տանը՝ ընտանիքի հետ

Մեր Տիրոջ Հարության տոնը երեխաներին ծանոթ արարողություն է, քանի որ այն նշում ենք ինչպես եկեղեցում, այնպես և տանը: Ազգային զանազան սովորույթները, որ կատարում ենք այս տոնի ընթացքում, պատկերվում են երեխաների մտքում:

Այսօրվա դասի սուրբգրային պատումները, քաղված Ղուկասի 7.36-8. 3, 23. 44-24. 12, Մատթեոսի 28.1-10, Մարկոսի 16.1-8, Հովհաննեսի 20.11-18 հատվածներից, հստակ փաստեր են տալիս երեխաներին, որոնք էլ ընկած են տոնի հոգևոր արարողությունների հիմքում:

Ներկայացված պատումները և Հարության տոնի հետ կապված արարողություններն ու ավանդույթները նպատակ ունեն ամրապնդել երեխաների հավատը հարուցյալ մեր Տիրոջ նկատմամբ: Զատկական հավկիթների ներկման սովորույթի արմատները և դրա հետ աղերսվող ձվակռվի խաղերը, ընկերներին ու բարեկամներին այցելելու և զատկական ողջույնով բարևելու սովորությունը երեխաներին հրավիրում են մասնակցել հարության լուրի ավետմանը, որը առաջին անգամ կատարեց Մարիամ Մագդաղենացին և հայտարարեց. «Ես տեսա Տիրոջը, Նա ողջ է»:

Ահա որոշ բաներ, որ կարող եք անել ձեր երեխայի հետ.

1. Երեխային հանձնարարե՛ք նկարել մի պատկեր աստվածաշնչային պատմությունից, որն այսօր լսեցին դասի ընթացքում:
2. Թող երեխան դերով ներկայացնի Մարիամ Մագդաղենացու պատմությունը կարմիր զատկական ձվի մասին:
3. Ավագ Ուրբաթ կամ Ավագ Շաբաթ օրը ներկե՛ք զատկական հավկիթները ձեր երեխայի հետ՝ միշտ անդրադառնալով դրա սկզբնավորման պատմությանը:
4. Զատկի կիրակի օրը ձեր երեխայի հետ այցելե՛ք հարևաններին և ողջունե՛ք նրանց՝ ասելով. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»:

ԴԱՍ 36

# ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԸ

«ԵՎ ՄԻՆՉ ՀԻՍՈՒՍԸ ՕՐՀՆՈՒՄ ԷՐ ՆՐԱՆՑ, ԲԱԺԱՆՎԵՑ ՆՐԱՆՑԻՑ ԵՎ ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔ ԷՐ ՎԵՐԱՆՈՒՄ»:

Ըստ Ղուկ. 24.51

## ՃԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Րաֆֆիի մեծ պապիկը գյուղից եկել էր փեսնելու իր թոռնիկին: Նա մի քանի ամիս ապրեց նրանց հետ: Ապա եկավ ժամանակը, երբ մեծ պապը պիտի վերադառնար տուն:

Պապիկին հրաժեշտ տալուց հետո Րաֆֆին գիտեր, որ երկար ժամանակ գուցե չտեսնի նրան: Բայց նաև գիտեր, որ իր մեծ պապը վերադառնում է իր տուն:



*Ի՞նչ ես կարծում, Րաֆֆին ի՞նչ հույս ուներ: Ընտրի՛ր ճիշտ տարբերակը նախադասության լրացման համար:*

**քնի** **նորից գա** **գնդակ խաղա**

*Պապիկը պիտի*

*Ասպվածաշնչի այսօրվա դասում տե՛ս, թե ո՞վ վերադարձավ երկինք և նորից պիտի գա:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## Հիսուսը վերադառնում է Հոր մոտ

### Ըստ Ղուկ. 24.36-53, Մատթ. 28.18-20, Գործք. 1.1-11

*Կարդա՛ պատմությունը ուսուցչի հետ: Օգտվի՛ր բառացանկից և գրի՛ր բառերն իրենց ճիշտ տեղերում:*



Հիսուսը հարություն առավ __ __ __ __ __ օրը: Նա նորից կենդանացավ և այլևս չպիտի մահանա: Նրա ընկերներից շատերը ուրախությամբ ընդունեցին այս հրաշալի լուրը, իսկ ոմանք չէին հավատում:

**Բառացանկ**

Զ ա տ կ ի
հ ա ր ո ւ թ յ ո ւ ն
ք ա ռ ա ս ո ւ ն

«Արդյո՞ք Հիսուսն իսկապես մահացել է», - հարցնում էին նրանք, - «Արդյո՞ք նա իսկապես __ __ __ __ __ __ __ __ է առել»: Կային նաև ոմանք, ովքեր ցանկանում էին Հիսուսի մահը, որով սկսեցին չար սուտեր հորինել: Մեր Տերն ուզում է, որ բոլորն իմանան ճշմարտությունը: Դրա համար էլ նա __ __ __ __ __ __ __ օր ավելի մնաց երկրի վրա, որպեսզի ցույց տա, թե Ինքն իրոք ողջ է: Նա քայլեց, զրուցեց և հաց կերավ նրանց հետ: Ապա ցույց տվեց իր ձեռքերի ու կողքի վերքերը: Տերը նույնիսկ թույլ տվեց, որ Թովմաս ձեռքով շոշափի իր վերքերը:

Աշակերտների հետ Հիսուսը քայլեց մինչև լեռնակողմ: Նա նստեց և խոսեց նրանց



հետ. «Իմն է երկնքի ու երկրի ամբողջ իշխանությունը, և դուք եք իմ պատգամախոսները», - ասաց նա:

«Գնացե՛ք և բոլորին պատմե՛ք այն սիրո մասին, որը ցույց տվեցի ձեզ: Բոլորին __ __ __ __ __ __ __ դարձրեք, նրանց սովորեցրե՛ք այն ամենը, ինչ

**Բառացանկ**

ա շ ա կ ե ՛ ր տ

Մ կ ր տ ե ՛ ք

գ ա

սովորեցրի ձեզ:

__ __ __ __ __ __ նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Գնացե՛ք և մնացե՛ք Երուսաղեմում մինչև կուղարկեմ Սուրբ Հոգուն: Երբ Հոգին իջնի, կիմանաք ձեր անելիքը: Հիշե՛ք, ես միշտ ձեզ հետ եմ ձեր կյանքի բոլոր օրերին»:

Հիսուսը բարձրացրեց իր ձեռքերը և օրհնեց նրանց: Նրանց օրհնելիս բոլորի աչքի առջև Հիսուսը գետնից վերև բարձրացավ և վերացավ դեպի երկինք:

Նրա ընկերներն արագ ցատկեցին և բացականչում էին բարձր ու երկար: Նրանք աչքերը չէին կտրում Տիրոջից, մինչև որ ամպը ծածկեց Հիսուսին: Նրանք շարունակում էին հայացքով հետևել ամպերի մեջ անհետացող Տիրոջը, երբ հանկարծ մի ձայն լսվեց: Երկու մարդ լուսափայլ զգեստներով կանգնեցին նրանց առաջ և ասացին. «Ինչո՞ւ եք վերև նայում: Հիսուսը, որ երկինք բարձրացավ ձեր միջից, մի օր պիտի __ __ նույն կերպով: Եվ ապա պիտի իր հետ երկինք տանի բոլոր նրանց, ովքեր հավատում են Իրեն»:

Նրանց սրտերը լցվեցին ուրախությամբ: Աստծուն փառաբանելով նրանք վերադարձան Երուսաղեմ՝ սպասելով Սուրբ Հոգու գալուստին:

# Կյանքը եկեղեցում

## Առաքյալներն ընտրում են



Հիսուսի՝ երկինք համբարձվելուց հետո աշակերտները վերադառնում են Երուսաղեմ և հավաքվում են այն սենյակում, որտեղ անցկացրել էին Վերջին Ընթրիքը Հիսուսի հետ: Նկարում քանի՞ հոգի են նստած __ :

Պետրոս առաքյալը ոտքի կանգնեց և ասաց Հիսուսի հետևորդներին. «Ընկերնե՛ր, Հուդան էլ մեզ հետ էր: Սակայն նա դեմ դուրս եկավ Հիսուսին և օգնեց նրան ձերբակալողներին: Հիմա նա այլևս մեզ հետ չէ: Եկեք ընտրենք մեկին նրա փեղը»:

Առաջ բերեցին երկու հոգու, ովքեր սիրում էին Հիսուսին և հետևում էին նրան: Երկուսն էլ լավ մարդիկ էին, բայց չգիտեին որ մեկին ընտրել: Այսպիսով, նրանք աղոթեցին. «Տե՛ր, Դու լավ գիտես բոլորին: Ցո՛ւյց տուր, թե այս երկուսից որի՞ն ես ընտրել Հուդայի փեղը գրավելու համար»: Ապա նրանք վիճակ գցեցին նրանց համար, և վիճակն ընկավ Մատթիային:

**Հոգևոր Բառարան**

**Վիճակ գցել՝** ընտրություն անել երկուսի միջից:

**Մատթիան դարձավ __ __-րդ առաքյալը**

## Հավատամք

Մեր Եկեղեցին հավատում է այն խոսքերին, որ հրեշտակը հայտնեց առաքյալներին Հիսուսի համբարձումից հետո: Ամեն կիրակի մենք արտասանում ենք Հավատամքը, այսինքն՝ այն, ինչին հավատում ենք:

*Գրի՛ր բառերն իրենց ճիշտ տեղերում՝ պարզելու նախադասությունը:*







Հիսուսը պիտի ____________ նորից նույն ____________

*Գծի՛ր մի նկար՝ ցույց տալու, թե քո կարծիքով Հիսուսն ի՞նչ տեսք կունենա, երբ նորից գա:*

## Երգում ենք ցնծությամբ

***Համբարձվեց մեր Տերը երկինք, աշակերտներին ասելով. մնացե՛ք Երուսաղեմ քաղաքում մինչև երկնքից զորություն կստանաք:***




## Տանը` ընտանիքի հետ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը նշվում է Հարությունից 40 օր հետո: Այն անփոփոխ հանդիպում է  հինգշաբթի օրվան, երբ եկեղեցիներում Սուրբ Պատարագ է մատուցվում:

Ամպերի միջով Քրիստոսի համբարձման դրվագը մի գրավիչ պատմություն է վեց տարեկանների համար, որը և հարմար առիթ է փալիս երեխաներին Նիկիական հանգանակի հավատո խոստովանությունը: «... *Համբարձվեց երկինք նույն մարմնով և նստեց Հոր աջ կողմում: Նորից գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին ու մահացածներին, և նրա թագավորությանը վերջ չպիտի ունենա*»: Իհարկե, երեխաների համար ներկայացնում ենք սոսկ մի հաստատում ասելով. «*Հիսուսը նորից պիտի գա նույն մարմնով*»:

Տիրոջ համբարձմանը հաջորդում է Հուդա Իսկարիովտացուն փոխարինելու ընտրության դեպքը՝ ինչպես նկարագրված է Գործք. 1.15-26 հատվածում: Մատաթիային ընտրելու համար առաքյալների աղոթքը և վիճակ գցելը հիմք է ծառայել հայերիս մեջ ընդունված «Վիճակ» գցելու գեղեցիկ սովորության համար, որը կատարվում է Համբարձման տոնի օրը:

Օգնի՛ր, որ երեխաները նշեն Համբարձման տոնը:

1. Հանձնարարե՛ք, որ երեխան վերապատմի Համբարձման պատմությունը և նկարի դրա մասին:
2. Թղթե մի պաստառի վրա գրե՛ք «*Հիսուսը պիտի գա նորից նույն մարմնով*» փողը և թող ձեր երեխան այն գունազարդի: Պաստառը փակցրե՛ք ձեր տան երևելի մի պատին Համբարձման տոնի օրը:
3. Միասին երգե՛ք Համբարձման շարականը:

# ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔՆԵՐ

1. Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու. ամեն:

2. Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. ամեն:

## 3. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Հա՛յր մեր, որ երկնքում ես,
սո՛ւրբ թող լինի քո անունը.
քո թագավորությո՛ւնը թող գա.
քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես
որ երկնքում է՛.
մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ
այսօր.
և ների՛ր մեզ մեր հանցանքները,
ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ
հանցանք են գործում մեր դեմ.
և մի՛ տար մեզ փորձության, այլ փրկի՛ր
մեզ չարից.
որովհետև քո՛նն է թագավորությունը և
զորությունը
և փառքը հավիտյանս. ամեն:

## 4. ՀԱՎԱՏՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հավատում եմ Հորը՝ որպես ճշմարիտ
Աստված,
Հավատում եմ Որդուն՝ որպես
ճշմարիտ Աստված,
Հավատում եմ Սուրբ Հոգուն՝ որպես
ճշմարիտ Աստված:

/Սուրբ Պատարագ/

## 5. ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ

Տե՛ր, եթե շրթներս բացես, բերանն իմ
կերգի քո օրհնությունը:

/Սաղմոս 50.17/

6. Լույսի առավոտ
Արդար արեգակ
Թող քո լույսը ծագի ինձ վրա:
Հորից բխող Սուրբ Հոգի
Հոգուցս բխեցրու
Քեզ խոսքեր հաճելի:

/Սուրբ Ներսես Շնորհալի/

## 7. ԱՂՈԹՔ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ուղղի՛ր մեր ձեռքի գործերը, Տե՛ր, մեր ձեռքի գործերը հաջողությա՛մբ պսակիր. ամեն:

/Սաղմոս 89.17/

## 8. ԱՂՈԹՔ ԼԱՎ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իմաստություն Հոր՝ Հիսուս, տո՛ւր ինձ իմաստություն բարին խորհել, խոսել և գործել ամեն ժամ Քո առաջ, փրկի՛ր ինձ չար խորհուրդներից, խոսքերից և գործերից. և ողորմի՛ր քո արարածներին, և ինձ՝ բազմամեղիս. ամեն:

## 9. ԱՂՈԹՔ ՃԱՇ ՈՒՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ճաշակենք խաղաղությամբ այս կերակուրները, որ մեզ պարգևել է Տերը, օրհնյա՛լ է Տերն իր պարգևների համար. ամեն:

## 10. ԱՂՈԹՔ ՃԱՇ ՈՒՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Փառք փիեզերքի կերակրողին, որ մեզ կերակրեց և կշտացրեց, Նրան փառք հավիտյանս. ամեն:

## 11. ԱՂՈԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Բոլորի պահապան Քրիստոս, թող քո Աջը հովանի լինի ինձ գիշեր ու ցերեկ, տանը մնալիս, ճամփա գնալիս, քնած թե արթուն, որպեսզի երբեք չփկարանամ. և ողորմի՛ր քո արարածներին, և ինձ՝ բազմամեղիս. ամեն:

/Սուրբ Ներսես Շնորհալի/

## 12. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Ամեն հայի սրտից բխած,
Լսի՛ր այս ձայնը, ո՛վ Աստված.
Երկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հորը.
Տե՛ր, անսասան պահիր Դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռը: